



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1890

6 NOV 2011

Handwritten notes in purple ink, possibly including a name and a date.

891-99
G-40

891.99

G-40

U.S.

U.S. R. & C.

Հեծո՞րկա Քարթումուզ

VI

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՐՍԵՂ ԶԱՄԱԼԵԱՆԻ.

ԱՆՆԱ ՍԱՐՈՅԵԱՆ

ԷՏԻԻԴ

ԳՐԾՑ

Ն Ա Ր - Դ Ո Ս

Հարցում

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐՐ» Տ. ՆԱԶԱՐԾԱՆԻ

Յօժովիճ. պր. և Քարթումուզ. փող. 106/107:

1890

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՈՒՐԱՍ ԱՄՄԱ

Արտատպած «Նոր-Դար» լրագրից

Дозволено Цензурою Тифлиса,
2 септябра 1889 года

Ս Ո Ք - Գ Ս Յ



5978-55

1881

...անպա որ զորոյս դարձան միւս եւլ նորոց իրենս իկապումի
...այսման հիմամբ վրայեման հետեւեալ զարգաց յարարումս է զի
...նմի այդ զո սկսեցաւ սովորոց կրթոցս եւնարդի իրարու ուսն
...իս յաման անկ իմանաւոր մտաւորսն ընդհարմար զո աստու
...մանկոց իսկ զմեզ վն նորոց սովորսն ընդհարմար զո աստու
...նորոց վն մտկայարարումսն մտնման յարարումսն — ստուար ստի միւ
...որ զմեզ վն նորոց սովորսն ընդհարմար զո աստու
...նմի այդ սովորսն զի աստուարումսն նորոց սովորսն ընդհարմար
...նմի սովորսն ընդհարմարսն — նորոց վն իմանամ այսմ...
...նորոց իմանարարումսն միւս իմանարարումսն զարգաց յարարումսն
...նմի մեզմիջեւ իրարու իրարու միջեւ զարգաց յարարումսն
...նմի իսկ նա թիֆլիս, սեպտեմբերի 6-ին 1880.

ԱՆՆԱ ՍԱՐՈՅԵԱՆ

ՆԱՄԱՆ Ա.

Իմ սիրելի Հռիփսիմէ, իմ անգլին բոյրելի,

Անսպասելի նամակդ ինձ շատ տխրեցրեց և միևնույն
ժամանակ շատ բարկացրեց: Մթթ է դու կարծում ես, որ ես
եբր և եղէ կարող կը լինիմ — մինչև անգամ եթէ այդ կամենամ
էլ — մոռանալ նրան, որ մանկութեանս ժամանակից է վեր իմ
ամենասիրելի, իմ ամենաարտակից ընկերուհիս է եղել, որն
ամեն ժամանակ և ամեն դէպքում համարձակ յայտնել էմ
սրտիս բոլոր գաղտնիքներն և որ կիսել է տխրութիւնս, կրկնա-
պատկել է ուրախութիւնս: Ինչ ինձ մոռացար, Աննա, դու
ինձ մոռացար, դառնութեամբ բացախանշում ես դու նամա-
կիդ մէջ: Ես չեմ հասկանում, թէ այդ ինչ կատարած է (թէ և
հաւատ կարող էի անուանել այն զգացմունքը, որով դու գրել
ես այդ բառերը), որ ծնել է քո մէջ մեր անզտտունն ու եր-
կարատեւ լուրթիւնը: Ինչէ այդ ընկերական անհուն, կոյր սի-
րոյ յանկարծ բռնկող անմեղ բարկութեան արգասիք է: Եթէ
այդպէս է (որ ամենահաւանականն էմ գտնում), ապա ես կըր-

կնապատիկ ուժով սերում եմ այն մաքուր սիրտը, որ տրամադիր է այդպիսի արդար բարկութիւններու: Ի հարկէ, անպատճառ չպիտի երդուեմ, սիրելի քոյրիկս, որպէս զի դու ինձ հաւատաս, որ, չնայելով ես այսքան ժամանակ քեզ նամակ չէի գրում, բայց ամեն օր և միշտ յիշում էի քեզ. իսկ երբեմն—և այն շատ յաճախ—մի այնպիսի անհուն կարօտութիւն էի զգում դէպի քեզ, այնպէս ցանկանում էի քո ներկայութիւնը, որ... միթէ բառեր կան այդ զգացումներն արտայայտելու: „Բայց ինչո՞ւ նամակ չէիր գրում“, անպատճառ կը հարցնես դու ինձ: —Ինչո՞ւ նամակ չէի գրում քեզ,—հարցնում եմ և՛ ինքս ինձ: Պատասխանի համար պէտք է ղիմել այն անհասկանալի զօրութեանը, որ՝ մարդկային կամքին հակառակ՝ միայն ինքն է ըզգացմունքները ղեկավարը: Մարդկային սիրտն երբեմն այնպէս լցում է (սակայն այդ շատ քչերին է պատահում, իսկ ինձ՝ շատ յաճախ, մանաւանդ վերջին ժամանակներս), նորանոր զանազան զգացմունքները՝ միմեանց խառնուելով՝ այնպիսի ուժով գործում են նրա մէջ, որ նրանց կարելի չէ լինում արտայայտել ո՛չ բառերով և ո՛չ, մինչև անգամ, գրչով: Զօրեղ զգացմունքները պեկորուող սիրտն էլ ունի իւր կապրիզներն, ինչպէս ոկիանոսն ահեղ փոթորիկի ժամանակ: Առանց դուրս գալու սրտի պատերից, այդ զգացմունքներն, ինչպէս լաւան երկրի ներքը, բորբոքում են, եռում այնքան, մինչև որ իրենք իրենց դարձեալ հանգստանում են, խաղաղում, Բայց ո՞րքան քաղցր և թեթեւ, բայց և, միևնոյն ժամանակ, ո՞րքան դառն և ծանր է զգացմունքների այդ ալեկոծութիւնը սրտի մէջ: Ուզում ես աղօթել և անիծել, ուզում ես ապրել և մեռնել: Նրանի, բայց և վա՛յ նրան, ում սրտին յատուկ են այդպիսի ալեկոծութիւններ... Նե ո՞վ գիտէ մինչև երբ ես այսպէս շարունակէի պահպանել դէպի քեզ ունեցած լուսութիւնս, սիրելի քոյրիկ, եթէ նամակդ յանկարծ չբանար սրտիս դռները քո առաջ... Բայց այստեղ գրելս այլ ևս առաջ չէ գնում... Տարա-

կուսում եմ... Ի՞նչպէս յայտնեմ այն, ինչ որ այժմ զգում եմ ես... Ամբողջ քառօրե ժամ անցաւ. գրելը ձեռքիս կանգ է առնում. գրութիս խոնարհուել է թղթի վրայ. սիրտս սաստիկ բարակում է... Հագարաւոր զգացմունքներ և մտքեր ալեկոծում են ինձ. ուզում եմ, ամեն ջանք գործ եմ դնում արտայայտելու դրանց նամակիս մէջ, բայց... Այն ժամ էլ անցաւ... Ո՛չ, չեմ կարողանում: Մնացել բարև, անգլիս քոյրիկ: Միւս անգամ:

Ամենասաստիկ կարօտով սեղմում եմ քեզ կրծքիս և համբուրում եմ քեզ:

Քո Աննա Սարոյեան:

ՆԱՄԱԿ Բ

Թիֆլիս, սեպտեմբերի 20-իւ 1880.

Սիրելի Հռիփսիմէ,

Դու գարմանում ես, թէ ինչպիսի եղանակով էի գրել նամակս. «կարծես, մեղամաղձութիւն է եկել վրադ», գրում ես դու: Իրաւունք ունիս գարմանալու և այդպէս կարծելու, քանի որ այդ եղանակով գրած նամակ ինձնից դեռ երբէք չես ստացել: «Ի՞նչ է պատահել քեզ», հարցնում ես դու:—Ոչինչ, բոլորովին ոչինչ չի պատահել ինձ. ես նոյնն եմ, ինչպէս դու վերջին անգամ տեսել ես ինձ. ապրում եմ նոյն լիութեան մէջ, ինչպէս դու գիտես. ծնողներս, եղբայրներս բոլորը ողջ և առողջ են և մենք առաջուայ նման հաշտ և սիրով ենք ապրում: Ըստ երևոյթիւն, ես պէտք է որ երգանիկ լինիմ, տրտնջալու ոչինչ տեղիք չպիտի ունենամ, այնպէս չէ՛, սիրելի քոյրիկ: Բայց արև տես, որ այդ այդպէս չէ.—ընդհակառակի՛ն՝ այս վերջին ժամանակներս ես ինձ թշուառ եմ զգում՝ առանց մի որ և իցէ ակնյայտ պատճառի: Ել չես տեսնիլ ինձ առաջուայ նման

ամեն մի շնչին բանի վրայ ուրախ քրքչալիս կամ չարածճի-
 ութիւններ անելիս, որոնց համար դու ինձ միշտ նախատում
 էիր և խրատում, որ ես գոնէ փոքր ինչ լրջմիտ կենամ։ Էլ չես
 տեսել, ինձ առաջուայ նման ցանցառամիր երկտասարդները
 ետևից ընկած, որի համար քո նախատինքն աւելի սաստիկ էր
 լինում և երբ չէր լուծւում քեզ դու ուղղակի խոռովում էիր ինձ-
 նիդ մինչև անգամ երկար ժամանակներով։ (Բայց եթէ այժմ
 տեսնես, թէ որքան ես ատում եմ այդպիսի երկտասարդներին
 և որքան զգում եմ դրանցից... գուցէ այժմ ես նախատեմ
 քեզ և խոռվեմ քեզնից, եթէ դու ինձ չլսես)։ Առաջուայ
 անմիտ, երեխայական արարքներիցս էլ ոչ մի նշույլ չես տեսնիլ
 իմ մէջ։ Կարծես երկտասարդութեանս վաղուց արդէն հրաժեշտ
 եմ տուել, սիրտս կարծես մի անգամից ծածկուել է և էլ հնար
 չկայ նրան բանալու։ Այն, ինչ որ առաջ ես հոգով չափ սերում
 էի, այժմ սաստիկ ատում եմ։ Կլուբ բոլորովին չեմ գնում,
 պարահանդէսներ—համարեա երբէք, իսկ թատրոն—չատ քիչ
 անգամ։ Ամեն տեղ և ամեն բանից շատ շուտ եմ ձանձրա-
 նում։ Նս այժմ սերում եմ միայն առանձնութիւն և շատ ջիգ-
 րըս գալիս է, երբ ինձ անհանգստացնում են։ Առանձնութեան
 ժամանակ մտածմունքներն ակամայ պաշարում են ինձ։ Շատ
 անգամ այնպէս խորասուզում եմ մտածմունքներիս մէջ, որ
 ամեն բան կատարելապէս մոռանում եմ։ Բայց թէ ինչ եմ մը-
 տածում,—այդ ես ինքս էլ չգիտեմ, միայն այս գիտեմ, որ, ինչ
 որ մտածում եմ, բոլորը դառն է լինում։ Երբեմն՝ մտածմունք-
 ներիս անձնատուր եղած լինելուց յետոյ՝ երբ յանկարծ սթափ-
 ւում եմ, զգում եմ, որ աչքերս լցուել են արտասուքով և քիչ
 է մնում, որ հեկեկամ։ Կինում է և ժամանակ, երբ սաստիկ
 ծուլանում եմ,—թէև, ինչպէս գիտես, բացի կարդալուց և
 դաշնամուր անելուց ես ուրիշ ոչ մի գրադմունք չունիմ,—և այն-
 քան ծուլանում եմ, որ առաւօտները ոչ ուզում եմ անկողնիցս
 վեր կենալ և ոչ տնից դուրս գնալ, ուզում եմ միշտ մնալ այն-

պէս, ինչպէս որ կամ։ Բայց երբեմն էլ մի այնպիսի անզուսպ
 կատարել շարժումութեան պէտք եմ զգում, որ մի անգամից ու-
 գում եմ և այս անել, և այն, և վազել, վազվզել, և պարել,
 անդադար սարել, դաշնամուր անել, կոտորել, վիթել, ծեծել,
 մի խօսքով անել այն ամենն, ինչ որ կամենում եմ և ինչ որ
 ձեռքիցս կը գայ։ Հենց երէկ ճիշդ այդ դրութեան մէջ էի.
 երեկոյեան՝ թէյը խմելուց յետոյ՝ բաժակի այնպէս շարտեցի
 սեղանի վրայ, որ նա գլորուեց, ընկաւ շատակի վրայ և փշր-
 ուեց։ Վերջը գերբը կարդալու, բայց մի քանի սոող հազիւ կար-
 դացած՝ խկոյն ծածկեցի և սաստիկութեամբ շարտեցի՝ շատակի
 խփեցի մի քանի ակիդորդներ, որ ստեղծեքներըց մէկի գազա-
 նակը կոտորուեց։ Էլ չեմ յիշում, թէ ինչեր արեցի։ Մեր տանը
 բոլորը զարմացած մնացել են։ Նս էլ պակաս չեմ դարմացել,
 հաւատացիր։ Ախր ինչո՞ւ եմ ես այսպէս անում, ինչո՞ւ, խելո՞ւ-
 գարում եմ, ինչ է, թէ այս էլ մի տեսակ հիւանդութիւն է,
 որ ախամայ դալիս է մարդու վրայ։—Ոչինչ չեմ հասկանում։
 Բայց այս մի բանն ես շատ լաւ հասկանում եմ, զգում եմ, որ
 սիրտս ձգտում է, սաստիկ ձգտում է մի ինչ-որ անյայտ, կար-
 ծես, երբէք գոյութիւն չունեցող բանի, ձգտում է և, կարծես,
 յոյս չունի, որ երբ և իցէ կը հասնի դրան... Է՛հ, ինչ և իցէ.
 Սակայն ես այժմ ամեն կերպ աշխատում եմ այդ չնմար դրու-
 թիւնից դուրս գալու և յոյս ունիմ, որ դանազան գրադմունք-
 ներով ինձ այդ կիջողուելի Նս սկսել եմ շատ կարդալ և համա-
 րեա ողջ օրն՝ ընթերցանութեամբ եմ անց կացնում։ Սիրելիս,
 նամակ շուտ-շուտ գրելը, ես էլ շուտ-շուտ կը գրեմ։ Ի նկատի ու-
 նեցիր, որ սիրտս արդէն բաց է եղել և ես այլ ևս չեմ կարող
 նրան ծածկել։ Ուզում եմ նամակներով քեզ հետ ամեն ինչ
 բաժանել. զգում եմ, որ այդ ինձ թեթևութիւն կը պատճառէ։
 Առ այժմ, սիրելիս, ցնոր գրութիւն։

Բո Աննա Սարգիսեան։

ՆԱՄԱԿ Գ.

Քիֆուս, հոկտեմբերի 4-ին 1880.

Սիրելի Հովհաննէ,

Ի՞նչ աշխատում ես բացատրել հոգեկան օտարոտի դրու-
 թիւնս և գտնում ես, որ այդ անգործունէութիւնիցս է: Ի՞նչ
 մասամբ ճիշդ է և այդ, բայց այս էլ կայ, որ ես դէպի նոյն մի
 գործ ձգտումն չեմ գգում: Եւ ի՞նչ գործ կը հրամայէիր, որ կա-
 տարէի, ի՞նչ անէի, ինչո՞վ գրադուէի, քանի որ մի հասարակ
 գործուածք անգամ մինչև վերջը համբերութիւն չունիմ տա-
 նելու և ամեն բան, ինչ ձեռքս եմ առնում, ձգում եմ կիսատ... Ո՛չ,
 ես կարծում եմ, որ գլխաւոր պատճառը մենակութիւնս է: Ի՞նչ
 դու զարմանաս, բայց այդ այդպէս է. ես մենակ եմ այժմ, և
 այդ ոչ թէ այն պատճառով, որ առաջուայ նման ես այլ ևս
 ընկերուհիներ չունիմ, որոնց հետ կարողանամ անցնել ժամա-
 նակս տաղտկութիւնից խուսափելու համար,— ոչ, այլ այն պատ-
 ճառով, որ ես ինքս հեռացել եմ նրանցից, որովհետև նրանք
 բոլորն էլ ինձ այժմ շատ յիմար և դատարկ արարածներ են
 երևում... Այ, ուրիշ բան կը լինէր, եթէ դու լինէիր մօտս.
 այն ժամանակ ես երբէք չէի ձանձրանալ, երբէք տաղտկութիւն
 չէի գգալ, ինչպէս առաջ, երբ դու այստեղ էիր, թէ և այն ժա-
 մանակ քո չափից դուրս լուրջ դատողութիւններն և խրատներն
 երբեմն շարժում էին ծիծաղ... Տէր Աստուած, սրբան թեթեւա-
 միտ էի ես այն ժամանակ... Եւ ես այժմ զարմանում եմ, ճշ-
 մարիտ, թէ ինչպէս քո այդ առողջ խելքովդ, քո այդ զարգա-
 ցողութեամբդ դու կարողանում էիր ինձ հետ մի որ և իցէ յա-
 րաբերութիւն ունենալ, թէ և չբաւորութեանդ հետ ունէիր և
 սաստիկ ինքնասիրութիւն, որպէս զի խիղճն և եթ հեռա-
 նայիր ինձնից, երբ տեսնէիր, որ քո դէպի ինձ ունեցած սերտ

բարեկամութեան մէջ զանազան նախանձախնդիրները լոկ
 ստոր հաշիւներ են տեսնում քո կողմից: Ի՞նչպէս չէիր ձայնաբա-
 նում իմ ամենայնմար խօսակցութիւնից, որ միշտ այն մասին
 էր լինում, թէ գիշերը պարահանդէսում ում հետ պարեցել, ում
 հետ ծանօթացայ, սով ինչպիսի նոր հագուստ ունէր, թէ թատ-
 րոնում ինչ օպերա էին ներկայացնում, սով ինչպէս էր երգում,
 սով կար այնտեղ աչքի ընկնող, թէ ինչ նոր մօդա է եկել, ինչ
 նոր հագուստ պիտի կարելի տայի ինձ համար, թէ այս ինչ
 օրը սրտեղ եմ հրաւիրուած...— Անշուշտ դրա համար ես պար-
 տական եմ քո գիշող, սիրող բնաւորութեանդ և խղճահարու-
 թեանդ, որով դու կամենում էիր ինձ դռնէ փոքր ինչ խելքի
 բերել... Ա՛խ, անգին քոյրիկս, սրբան ես քեզ սիրում եմ: Որ-
 քան շատ եմ մտածում մեր բարեկամութեան մասին, այնքան
 սիրտս աւելի և աւելի է կապում քեզ հետ, որովհետև զնա-
 հատութիւնդ ես նոր եմ հասկանում: Ուզում եմ, որ այդ ան-
 ցեալը դռնէ մի բոպէ վերադառնայ և ես առատարողն ջերմ
 գգացմունքներով հատուցանեմ քեզ քո դէպի ինձ տածած ան-
 կեղծ բարեկամութեանդ փոխարէնը: Ի՞նչ չես կարող երեակա-
 յել, թէ սրբան կարօտում եմ քեզ այժմ: Եւ ինչպէս չկարօտեմ,
 քանի որ ամբողջ երկու տարի է անցել այն օրից, երբ դու
 վերջին անգամ եկար մեր տուն հրաժեշտիդ ողջօրը տալու
 մեզ: Այդ օրն ես յիշում եմ, ինչպէս երէկը: Ի՞նչ սքանչելի օր
 էր այդ:— Շաբաթ երեկոյ էր: Տան բոլոր դռներն և լուսամուտ-
 ները բաց էին դէպի պատշգամբը: Մայիսեան թարմ, զովարտ
 օդը, որ ես միշտ համեմատել եմ քեզ՝ քեքիկ մանկան ան-
 լսելի շնչառութեան հետ, ամենայն առատութեամբ ներս էր
 մտնում սենեակները: Արևի ճառագայթները՝ բեկուելով լուսա-
 մուտները ասպակները մէջ՝ անդրադառնում էին հանդէպի պա-
 տերի վրայ աղօտ և անջերմ լուսով: Պատշգամբում չարածձի
 ծտերն իրենց ուրախ ճլլիցով ահագին աղմուկ էին հանում:
 Նրանց ճլլիցի ձայնը սարգ օդում արձագանք էր տալիս: Ո՛ր-

քան սիրելի է գարունը, երբ երգում են թռչունները: Ի՞նչ կը լինէր գարունը, եթէ թռչուններ չլինէին:—Նա անշուշտ կը կորցընէր իւր հրապուրքն կէտը, ինչպէս ուրախ, հանդիսաւոր տօնաւամբութիւնն՝ առանց երգի կամ երաժշտութեան: Եւ նստած էի դահլիճում դաշնամուրն առաջ և նուազում էի Շումմանի սերենադը (ես շատ լաւ լինում եմ, որ հենց այդ էի նուազում), հարևան սենեակում պարապում էին եղբայրներս: մեծը—Արշակը նստած էր սենեակի վերջին լուսամտի մօտ՝ իւր գրասեղանի առաջ և կանցելարիայից բերած մի հահադէն կոյտ ինչոր թղթեր էր քրքրում, սենեակի միւս վերջին լուսամտի մօտ իւր գրասեղանի առաջ նստած էր միւս եղբայրս—Գրեգորը և կարդում էր «Իօն Կարոսը» (այդ ես լինում եմ նրանց, որ նա ներս մտաւ և, խնդրելով, որ ես լսեմ, կարդայ ինձ մօտ մի գեղեցիկ կտոր Մարկիի Պոզայի մի մենախօսութիւնից, որ ինքը շատ հաւանել էր: Նա առհասարակ չտիրից դուրս սիրում է Նիլէբը, դու լսօ գրտես, որ նա թունդ րօմանտիկ է): Իսկ փոքրը եղբայրս—Գարեգինը նստած էր մէջ տեղի լուսամտաներից մէկի առաջ և սովորում էր իւր դասը: Միւս հարևան սենեակում հայրս և մայրս «նարդի» էին խաղում, այդ նրանց սիրելի զբաղմունքն էր, և էլ երեկոյեաններին: Ա՛խ, ինչքան ուրախ, ինչքան երջանիկ էի ես այդ ժամանակ: Ի՞նչպիսի անհուն սէր էի զգում ես դէպի մեր այդ խաղող, սիրոյ, հաշտ ընտանիքը: Եթէ այն ժամանակ Աստուած ինձ ասէր՝ եկ քեզ աւելի լաւ կեանք տամ, ես կը հրաժարուէի և չէի հաւատար, թէ աշխարհիս երեսին դրանից էլ լաւ կեանք կարող է լինել: Սրտիս մէջ դրախտ էր բացուած և այդ դրախտն ես ուզում էի արտայայտել Շումմանի սքանչելի սերենադի մէջ...

Յանկարճ հարևան սենեակում լսեցի քո ձայնը:

—Նկեղ եմ ձեզ մնաք բարև ասելու: Վաղն առաւօտեան ես գնում եմ,—ասում էր դու ծնողներս:

Ես թողի դաշնամուրը, վեր թռայ և ներս վագեցի քեզ մօտ:

—Սիրելիս, մի՞թէ, իրաւ, վաղն առաւօտեան,—բացա-
կանջեցի՝ բռնելով ձեռքերիցս:

—Այո: Բնականաբար մյս ցօ կայմամ, եւյս ցամաք հնմ յ
«Այո»... Անգութ, ես քեզ ինչ էի արել, որ երջանկու-
թեանս բարձրութիւնից դու ինձ այնպէս յանկարճ ցած գը-
րեցիր: Ետք մ որս ցօ, եւ կտքս—որս ցօդքս յ որմն—

—Սիրելիս, Հովիտիս, յետագիւր,—փարում եմ վզովդ:

—Այո—կարծես երդուել ես դու:

—Սիրելիս, մնա մի քանի օր էր:

—Անկարող եմ:

Մի՞թէ սիրտն այդ բան կարող է քարանայ: Ինչ մնաք բարև ես ասում: Ծնողներս, մնաք բարև ես ասում եղբայրներս, սեղմում ես ամենքի ձեռքն էլ: Ես շտապով ծածկում եմ դիտարկ, դուրս եմ գալիս քեզ հետ: Գնում եմք: Ո՛ւր: Աստուած գիտէ: Սրիւսա էլ խօսում եմք, սակայն աւելի լաւում եմք, քան թէ խօսում: Ի՞նչու: Չգիտեմ: Բայց շատ քիչ բան էինք միմեանց ասելու, քիչ մար դրութիւն էր:

Հետեւեալ օրն ես քեզ հրաժեշտ տուի երկաթուղու կայա-
րանում: Վերջին ջերմ համբույրները դրոշմեցինք միմեանց շը-
թունքներին: Ի՞նչպէս անկեղծ կերպով լալիս էինք: Սքանչելի
արցունք: Նոգեկատուք սուլեց և սիտեց դեռ կամաց, յետոյ քիչ-
քիչ արագ փախցնել քեզ: Վերջին անգամ լուսամտից դու
շարժեցիր սպիտակ թաշկինակդ, ես—իմը և դու այլ ևս չկայիր
այժմ առաջ: Աստուծուն է միայն յայտնի, թէ այդ ժամանակ
ես ինչ խնդրեցի նրանից, և այժմ փառք նրան, որ դու ողջ և
առողջ ես...:

«Բայց ինչու դու գրում ես ինձ արդէն յայտնի այդ եղե-
լութիւնը, ինչու այդ բոլորը յեղեցնում ես ինձ», գուցէ հարցնես
դու, եթէ միայն դու այլ ևս ճոյնը չես, ինչպէս ես քեզ ձանա-

չում էի այն ժամանակ, որովհետև եթէ դու նոյնը լինես, ապա այդ յիշողութիւնը քեզ համար նոյնքան սիրելի կը լինի, որքան և ինձ համար այժմ, չնայելով, որ այն ժամանակից անցել է ամբողջ երկու տարի: Կարծեմ Գիւթէն է ասում—պէտք չէ քրքրել անցեալը, նա միշտ դառն է լինում ներկայի համար: —Ճիշտ է արդեօք այդ:—Չգուցէ եմ, որ՝ այդ և զգում եմ, որ՝ ոչ: Ինչո՞ւ: Բացատրել չեմ կարող, բայց ես այդպէս եմ զգում: Անցեալի յիշողութիւնը որքան դառն, նոյնքան և քաղցր է, և այդ պատճառով նա սիրելի է, որպէս անունը սրտիդ մօտ ւնի էակի, որին տարիներ առաջ հողին ես յանձնել: Այդ յիշողութեան մէջ կայ մի տեսակ ինքնուրոյն, եթէ կարելի է այսպէս ասել, հոգեկան սուրճիկ, ինչպէս երկու հակառակութիւնների զուգաւորութեան մէջ: Մի ծիծաղիլ փիլիսոփայութեանս վրայ: Կարծեմ այս անգամ այսքանս բաւական է, սիրելիս. միև անգամ մեր ընտանիքից տեղեկութիւն կը տամ քեզ, որ դու խնդրում ես ինձնից: Իսկ այժմ ընդունիր համբոյրս և մնացիւր բարև:

Քո Աննա Սարոյեան:

ՆԱՄԱԿ Դ.

Թիֆլիս, հոկտեմբերի 11-ին 1880.

Սիրելի Հռիփսիմէ,

Նախորդ նամակովս խոստացել էի քեզ տեղեկութիւն տալ մեր ընտանիքից և ահա կատարում եմ խոստումս:

Նախ պիտի ասեմ, որ Գրիգորը հիւանդ է. սաստիկ հազում է: Այս հինգերորդ օրն է, ինչ գիմնագիծն չէ գնում. բժիշկները խորհուրդ են տալիս առ ժամանակ ձեռք վերցնելու պարապմունքներից: Ես սաստիկ երկկաղ եմ կրում, որ նրա հի-

ւանդութիւնը թողախտ լինի, մանաւանդ որ նրա կազմուածքը շատ քնքոյշ և նիհար է: Գու գիտես, թէ ինչպէս ես սիրում եմ եղբայրներիս, առաւելապէս նրան, որ, այս վերջին ժամանակներս մանաւանդ, ինձ համար թէ եղբայր է՝ բառիս բուն նշանակութեամբ և թէ ամենամօտ խորհրդակից: Ես տանդուում եմ երբ տեսնում եմ նրան՝ ձեռքը կուրծքի վրայ դրած՝ այնպէս սաստիկ հազալիս: Նա շատ է պարապում, չափից դուրս պարապում է. կարծում եմ, որ նրա հիւանդութիւնը դրա հետևանքն է: Բայց Գրիգորի հիւանդութիւնը դեռ էլի ոչինչ, մի ուրիշ հանգամանք կայ, որ թէ ինձ և թէ մեր բոլոր ընտանիքին աւելի է մտատանջում:—Գու գիտես, թէ հայրս ինչպիսի զուարճասէր և կատակներ անող մարդ է, բայց վերջին ժամանակներս մեծ փոփոխութիւն է նկատուում նրա մէջ. օրինակ՝ երեկոյեանները նա վերադառնում է տուն միշտ մի ակեսակ տխուր ու մտախոհ և գլխարկին աչքերի վրայ վայր թողած, այն ինչ առաջ՝ տուն գալիս՝ նա գլխարկը միշտ ետ գցած էր ունենում ձակատի վրայ և միշտ մըրմնջում էր մի որ և իցէ ուրախ երգ: Խօսելիս էլ ամենքի հետ բարկացած է խօսում, կարծես ամենքն էլ նրան մի որ և իցէ անախորժութիւն են պատճառուել, կարծես ամենքն էլ նրա առաջ մեղաւոր են: Մի անգամ ես հարցրի նրանից դրա պատճառը, նա խոժոռած դէմքով նախ լուռ նայեց ուղղակի աչքերիս, յետոյ յանկարծ մի վայրկեան միայն ժպտաց, աչքերը վայր թողեց, ներքին շրթունքը կախեց և դէմքին տուեց մի այնպիսի ճիշտ և միևնոյն ժամանակ ծիծաղելի արտայայտութիւն, որպիսին ունենում է երեսան ան ինչ ժամանակ, երբ նրան բոլորովին ի զուր մեղադրում են չարութիւն անելուն համար:

—Ես ի՞նչ մեղաւոր եմ, օրիորդ,—արտասանեց նա բարակ, իբրև թէ, երեսայական ձայնով.—Վերակոսեանը չարութիւն է անում, դուք ի՞նչ էք մեղադրում: Ուզում էք Մարտիրոսեանին հարցրէք:

ես վարդապետ ծիծաղս զսպել և զրկեցի նրան:

— Հայրիկ, միթէ դու տխուր ժամանակը էլ կարողանում ես կատակներ անել,— բացականչեցի ես ուրախացած:

— Ուզում էք Մարտիրոսեանին հարցոյք, — կրկնեց նա նոյն բարակ ձայնով:

Ես դարձեալ ծիծաղեցի և աւելի ամօք գրկեցի նրան:

Նա կամաց ազատուեց գրկեցո՞, ժպտաց՝ նայելով աչքերն և, քնքշօրէն համբուրելով ճակատս, դուրս գնաց իւր առանձնասենեակը:

Ես մտախօհութեամբ նայեցի նրա ետևեկը: Ի՞նչպէս շուտ և հեշտութեամբ կարողացաւ ազատուել բացատրութիւնից: Այնուհետև ամեն անգամ ես նկատում եմ, որ նա ամեն կերպ աշխատում է խոյս տալ ինձնից, իսկ երբ այդ չէ ազդուում, դարձեալ իւր կատակներն է սխտում և, զարմանալի է, չնայելով որ այդ կատակները նա արձանայ է անում (ես այդ շատ բաւ նկատում եմ), բայց նրանք երբէք անհաս չեն դուրս գալիս և միշտ ունենում են իրենց ազդեցութիւնը, գոնէ ուրիշ այդ ժամանակ նայում է նրան (մինչև անգամ ես), չէ կարողանում զսպել իւր ծիծաղը: Սակայն նա ի գուր է տշխատում ծածկել ինձնից իւր վերջը, բայց որ մի վերջ— և այն ծանր վերջ— կրճուծ է նրա սիրտը և մեծ մտաատանջութիւն է պատճառում նրան, — այդ ես գիտեմ, այդ ես պարզ տեսնում նմ: Ի հարկէ, նրա վերջը Գրեգորի համար կարող չէ լինել, որովհետև Գրեգորն այնքան էլ հիւանդ չէ, որի համար կարելի լինէր այդպէս մտաատանջուել և, բացի դրանից, եթէ նրա վերջը հենց դրա համար էլ լինէր և մեզ երկիւղ չարամձառելու համար միայն՝ այդ մեղնից ծածկելիս լինէր, — ես այդ խելոյն կարող էի հասկանալ, տեսնել, բայց ես գիտեմ (և սիրտս էլ այդ նախագուշակում է), որ նրա վերջը բոլորովին ուրիշ բանի համար է իսկ թէ ի՞նչ բանի համար, — այդտեղ ես արդէն ոչինչ չեմ կարողանում հասկանալ և ոչ ենթադրել: Մայրս սաստիկ ան-

հանգիստ է նրա համար. ասում է, որ գիշերները նա հանգստութիւն չունի, իսկ երբեմն՝ քնած ժամանակ, ասում է, կարծես սաստիկ վատեցած, յանկարծ արդողակում է և վեր է թռչում. երբեմն էլ երազում, ասում է, ուղղակի լաց է լինում... Եւ չաւատացիր ես մնացել եմ սաստիկ տարակուսած: Ի՞նչ է նշանակում այս:

Բժ Սենա Մարոյեան:

ՆԱՄԱԿ Ե.

Թիֆլիս, հոկտեմբերի 29-ին 1880.

Սերելն Հովհաննէ,

Այս անգամ դարձեալ հօրս մտին պէտք է գրեմ, որովհետև իմ բոլոր մտածութեան առարկան դրա օտարտի դրութիւնն է, որից մինչև այժմ էլ գլուխ չեմ կարողանում դուրս բերել:

Անցեալ կիրակի օրն ելիւ մեր տուն Թոթաս Գանգալբէրը (Գու ճանաչում ես նրան, — այն անտառն, ժամանակից շատ վաղ ծերացած, անտէրութիւնից սրա-նրա դրանն անբող, իւր ասելով, « սոստալնոյ տխուրեարնը օսվանիկը », որ մէ մի օր եկեղեցուց ետ չէ բնկնում և որ ինչպէս աւետարանն ու տղմտոր, նոյնպէս և եկեղեցական բոլոր արարողութիւնները շատ լսելուց և կարգալուց անգիր գիտէ: Նա նոյնն է, ինչպէս դու տեսել ես նրան երկու տարի առաջ. ծերութեան ժամանակ մարդկանց մէջ փոփոխութիւնը շատ աննկատելի է կատարում: Հագուստն էլ նյնն է. նոյն խուճացած գլխարկը՝ կարմիր կ'ան տ ե ո վ, նոյն խուճացած նշանագետը՝ հնութիւնից սեւացած երկաթէ կրճակներով և նոյն ձեռնափայտը, որից նա նստած ժամանակն անգամ չէ բաժանուում: — Յղանալը, չնայելով աշուն լինելուն,

շատ տար էր. նն նստած էի սենեակումս՝ բաց լուսամուտի առաջ և կարդում էի Տուրգենևիլը. Եղբայրներս տանը չէին, մայրս խոհանոցուն էր, իսկ հայրս դուրսը—ստորագամբում: Նա նստած էր լուսամուտիցս հեռու՝ մէջքը դէպի ինձ արած և մտախոհ նայում էր քաղաքին: Նրբէ չգիտէի, թէ ես տանն եմ և նայում եմ իրեն, ապա թէ ոչ աչքերիս առաջ նա երբէք անձնատուր չէր քննել իւր տխուր մտածմունքներին: Բայց նա այն աստիճան անձնատուր էր եղել իւր մտածմունքներին, որ բոլորովին չնկատեց, թէ ինչպէս թոմաս Գասպարիչն իւր դանդաղ քայլերով մօտեցաւ նրան:

—Շատ խորն ես մտածում, աղս Գէորգ,—կարճ ժամանակ նրա մօտ լուռ կանգնելուց յետոյ, հարցրեց թոմաս Գասպարիչը, իւր բռն զայնացքով կողքից շարունակ նայելով նրան: Հայրս յանկարծ սթափուեց և նայեց նրան: Առաջին ճուռդ նա, կարծես չկարողացաւ ճանաչել նրան, որովհետև նախ մի ըռպէ, ըտ երևոյթին, զարմացած և լուռ նայեց նրա դէմքին, յետոյ յանկարծ բացականչեց.

—Ա՛, թոմաս Գասպարիչ, այդ դ՞ու ես... Բարև (նա մեկնեց նրան իւր ձեռքը): Ինչպէս ես Բէքիդը լուս է, Համեցիր նստիր: (Նա գոռաց ծառային, որ մի աթոռ բերէ): Նոր լուր կուեննաս, ասա տեսնենք: Անպատճառ եկեղեցուցն ես գալիս:

—Բաս իրտեղից պէտք է գամ,—մըթմըթաց թոմաս Գասպարիչը կարծես նեղացած, որ այդ բանը մասին դարձեալ հարցնում են իրեն:

—Ի հարկէ, ինձ համար էլ կ'աղօթէիր:

—Անպատճառ Բեզ համար էլ որ չ'աղօթեմ, աղա Գէորգ բաս էլ ո՞ւմ համար պէտք է աղօթեմ:

—Բեզ համար:

—Է՛, ամեն մարդ որ միայն իւր գլխի մասին մտածէ, այդ ո՞ւր կը գնայ:

—Իւր դրպանն ու փորը... Բայց ասա տեսնենք՝ աղօթքի մէջ ի՞նչ էիր խնդրում ինձ համար:

—Ի՞նչ... Ահա ինչ,—ասաց թոմաս Գասպարիչը, նստելով նստալի բերած աթոռի վրայ.—Նախ և առաջ խնդրում էի, ի ամենակարողն Աստուած քեզ և ընտանիքիդ երկար կեանք տայ... կեանք խնդրեաց ի քէն, և ետուր նմա ընդ երկայն առուր՝ յաւիտեանս յաւիտենից: Երկար կեանքն, ի հարկէ, ամեն բանից լաւ է, այդպէս չէ՞, աղա Գէորգ:

—Ի հարկէ է... դու շարունակիր:

—Հա, նախ և առաջ խնդրում էի, որ ամենակարողն Աստուած քեզ... և ընտանիքիդ երկար կեանք տայ:

—Հէր օրհնած, այդ խօսասցիր,—անհամբերութեամբ և բարկացած ընդհատեց նրան հայրս.—Շարունակիր:

Թոմաս Գասպարիչը տարակուսանքով և զարմացած նայեց նրան. առաջին անգամն էր, որ հայրս նրա հետ այդպէս էր խօսում:

—Յետոյ խնդրում էի,—շարունակեց նա մայր անգամ փորը ինչ անվստահ եղանակով,—որ ամենակարողն Աստուած քեզ և ընտանիքիդ...

—Էլի՛,—նորից ընդհատեց նրան հայրս անհամբերութեամբ:

—Չէ՛, աղա Գէորգ, շարունակում եմ,—շտապեց պատասխանել խեղճ թոմաս Գասպարիչը,—...որ ամենակարողն Աստուած քեզ և ընտանիքիդ երկար կեանքի հետ և առողջութիւն տայ... երկար կեանքն առանց առողջութեան, ի հարկէ, մի կոպէլ չ'արժէ. այդպէս չէ՞, աղա Գէորգ:

—Այդպէս է, այդպէս... դու շարունակիր,—մեքենայաբար կրկնեց հայրս, առաջուայ նման մտախոհութեամբ նայելով քաղաքին: Նա կարծես այլ ևս չէր լուս թոմաս Գասպարիչին:

—Յետոյ խնդրում էի,—շարունակեց թոմաս Գասպարիչը,—որ ամենակարողն Աստուած գործիդ աջողութիւն տայ, առևտուրիդ աշխատանք տայ, սրտիդ բարի ցանկութիւններին կատարումն

5978-55



տայ, ուրախութիւն, երջանկութիւն տայ, որդոցը բարի միտք
 և սիրտ տայ, որ քեզ սիրեն, յարգեն և պատուեն... Խնդրում
 էի, որ քեզ և բոլոր ընտանիքիդ ամեն չարից հեռու պահէ,
 սատանայի փորձութիւնից ազատ պահէ, թշնամու սրտովը չանէ.
 «Փրկեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց և ի հալածչաց իմոց»:
 Խնդրում էի, որ իւր սուրբ ողորմութիւնը միշտ անպակաս անէ
 քեզնից և քո ընտանիքից... «ողորմութիւն քո, տէր, զհետ
 իմ եկեցեց զամենայն աւուրս կենաց իմոց»... «մտոյ մնա յից»:

Նա լռեց և կարծես նոր տեսաւ, որ հայրս ոչ նայում էր
 և ոչ լուսւմ նրան, նա գլուխը փոքր ինչ լծեքելով, առաջ տա-
 րաւ, որպէս զի լաւ նայէ հօրս դէմքին, որ ամբողջապէս դէպի
 քաղաքն էր դարձրած:

— Հը՛, ի՛նչ է... պրծա՛ր,— մտախոհութիւնից սթախուելով
 և դէմքը դէպի նա դարձնելով, յանկարծ հարցրեց հայրս:

— Ես պրծայ, աղա Ռէորգ, բայց դու ինձ չէիր լուսւմ,
 կարծես:

— Կարծես,— յարեց հայրս ծաղրական եղանակով:— Ընդ-
 հակառակն, իմ պատուելի տիտուլեարնրը սովէտնիկ, ես քո
 պատմածն աւելի լաւ էի լուսւմ, քան թէ դու ինքդ... Բայց
 այդ թողնենք, ուրիշ բան խօսենք... Ի՛նչ նոր լուր ունես, ասա
 տեսնենք:

— Է՛հ, աղա Ռէորգ, ես ի՛նչ նոր լուր պէտք է գիտենամ.
 բացի եկեղեցուց, ո՛ւր եմ գնում, որ ի՛նչ նոր լուր լսեմ... Լրա-
 գիւրը դուք էք ստանում, նոր լուրերը դու կը լինիս կարդացած:

— Այս քանի ժամանակ է, ինչ լրագիրը ձեռքս չեմ ա-
 ուել... Սպա գնատես, սեղանի վրայ կը լինի լրագիրը, բեր կար-
 դա մօտս... Սպասիր լաւ, դու ներութիւն մի կրիր, ծառան կը բերէ:
 Նա բարձրաձայն դարձեալ կանչեց ծառային և հրա-
 մայեց, որ լրագիրը բերէ:

Ես լուսամուտից տուեցի ծառային նախորդ օրուայ լրագրի
 համարը: Մառան տարաւ տուեց Թոմաս Գասպարիչին:

Թոմաս Գասպարիչը նախ հանեց իւր ակնոցը, որ պահում
 էր ինչպէս դու գիտես, առանձին պատեանի մէջ, դրեց աչ-
 քերին և սկսեց կարդալ: Նա կարդաց մի քանի լուր, թէ ինչ-
 պէս մի երիտասարդ անչայտ պատճառներից այս ինչ տեղն և
 այս ինչ ժամանակ անձնասպանութիւն է գործել («Սիրա-
 հարուած կը լինէր», այդտեղ նկատեց հայրս), թէ ինչպէս մի
 կին մի անգամից երեք երեխայ է ծնել, երեքն էլ կենդանի,
 թէ ինչպէս այս ինչ տեղն աւստրալները ճանասպարհին կողոպ-
 տել և սպանել են ճանասպարհորդներին, թէ ինչպէս այս ինչ
 յայտնի վաճառավարն սնտնկացել է և նրա բոլոր կայքը ա-
 ճուբբով վաճառել են...

Հայրս սկզբում, ըստ երևոյթիւն, հետաքրքրութեամբ էր
 լուսւմ Թոմաս Գասպարիչին, բայց վերջինս այնքան դանդաղ և
 անվարժ էր կարդում, որ նա շատ շուտով ձանձրացաւ և դէմ-
 քը դարձեալ շրջեց դէպի քաղաքը: Սակայն, ինչպէս ես նկա-
 տում էի, նա այնուամենայնիւ լուսւմ էր և լուսւմ էր գօրով,
 ինքն իրեն ստիպելով, կարծես չէր ուզում անձնատուր լինել
 մտախոհութեանը, որ, ինչպէս երևում էր, սկսածայ պաշարում
 էր նրան: Վերջ ի վերջոյ նա դարձեալ սկսեց հետաքրքրու-
 թեամբ լսել և, զարմանալի է, նրա հետաքրքրութիւնն այն
 աստիճանի հասաւ, որ նա մինչև անգամ շուտ եկաւ Թոմաս
 Գասպարիչի կողմը, արմունկով կամաց կը թնեց իւր ծնկան վրայ
 և սկսեց նայել ուղղակի նրա շրթունքներին: Այս անգամ ես
 տեսնում էի նրա դէմքը և երբէք չեմ կարող մոռանալ այն
 հայեացքը, որով նա նայում էր այդ ժամանակ. այդ հայեացքի
 մէջ կար և սաստիկ հետաքրքրութիւն, և սաստիկ երկիւղ, և
 մի տեսակ բան, որ ո՛չ կատաղութիւնն էր, ո՛չ ստրջանք և ո՛չ
 յուսահատութիւն... Վերջին լուրը լսելով, նա յանկարծ մի ան-
 պիսի ուժով դուրս խլեց լրագիրը Թոմաս Գասպարիչի ձեռքից,
 գոռալով— «Ինչ վատ ես կարդում»,— այնպէս ճղեց և, ձեռքում
 ճմլելով, շարտեց պատշգամբից ներքև, որ ես կարծեցի, թէ

խելագարուեց: Ես ինքս էլ չիմացայ, թէ ինչպէս այդ ժամանակ գրուես հանեցի լուսամուտից դէպի դուռս և նայեցի նրա կողմը: Նա յանկարծ տեսաւ ինձ և ես մինչև հիմայ էլ զարմացած մնացել եմ, թէ ինչպէս նա այնպէս արագութեամբ կարողացաւ փոխել իւր դէմքի արտայայտութիւնը. ձեռքերը վայր թողած՝ նա կանգնեց հանդարտ, աչքերը խոնարհեցրեց, ներքին շթուեցը կախեց (ինչպէս այդ արաւ մի անգամ, երբ ես հարցրի նրա մտախոհութեան պատճառը) և ասաց բարակ, իբրև թէ, մանկական ձայնով.

— Ես ինչ մեղաւոր եմ, օրիորդ... բայց ինչո՞ւ թո՞մաս Գասպարիչն այնպէս վատ է կարգում...

Բայց այս անգամ ես չծիծաղեցի. արդեօք նրան համար, որ ես արդէն հասկանում էի, թէ ինչ են նշանակում նրա այդպիսի կատակները, թէ նրան համար, որ այս անգամ նրա կատակը բաւական անհամ դուրս եկաւ, — այդ չեմ հասկանում. բայց ես չծիծաղեցի, ինչպէս այդ ակամայ անում էի նրա այդպիսի կատակներէ ժամանակ: Այդ կարծես, ինքն էլ զգաց, և դեռ մի րոպէ շիտթուելով իմ անթարթ, լուրջ հայեացքիցս, նա չանկարծ նայեց թո՞մաս Գասպարիչին և բարձրաձայն ծիծաղեց:

Ա՛նճա, — բացականչեց նա, առանց իմ կողմը նայելու, — թէ Աստուած կը սիրես, մէկ նայի՛ր մեր տխուրեանքնը սովէտնիկին:

Ես նայեցի թո՞մաս Գասպարիչին, բայց դարձեալ չծիծաղեցի, թէև այդ րոպէին նա շատ ծիծաղելի էր: Նա նստած էր անշարժ ակնոցն աչքերին և կատարեալ ապուշի նման բերանը բաց՝ նայում էր հօրս: Նրա ձեռքերը մնացել էին այնպէս, ինչպէս որ բռնած ունէր նրանց լրագիրը կարդալիս: Կարծես նրան դիտմամբ նստեցրել էին այդ դրուձեան մէջ, որպէս զի հանեն նրանից մի ծաղրական պատկեր: Հօրս բարձրաձայն ծիծաղից նա չանկարծ սթափուեց և ժպտալով դարձաւ ինձ:

— Տեսնո՞ւմ ես, Ա՛նճա, հայրդ ինչ չարաճճի մարդ է, — ասաց նա գրուելը շարժելով: — Լրագիրը ձեռքիցս խելց, ձրեց, ձմրեց և պատշգամբից ներքև գցեց. ասա ինչո՞ւ...

— Նրա համար, իմ սպտուելի տխուրեանքնը սովէտնիկ, որ... ձաշին մեզ մօտ կը լինես, — ասաց հայրս և զնաց դէպև իւր արանձնասենեակը:

Ես դիտմամբ այս անցքն այսպէս մանրամասն նկարագրեցի նամակին մէջ, սիրելի Հովիտիմէ, որպէս զի քեզ ցոյց տամ, թէ որքան մեծ է այն գաղտնի վիշտը, որ այնքան մտատանջութիւն պատճառելով, այնպիսի դրուձեան մէջ է ձգել նրան:

Այնպէս վախենում եմ, որ նա խելագարուի... Սարապին, անասելի վիշտն և յուսահատութիւնն իսկոյն պաշարում են ինձ, երբ մտածում եմ, որ կարող է այդպիսի դժբաղդութիւն պատահել... Բայց ի՛նչ անեմ, ի՛նչ... Սրտիս վատ նախազգացումները ես աւելի եմ սարսափում...

Ընդունելը ջերմ համբոյրներս:

Քո Ա՛նճա Սարոյեան:

ՆԱՄԱԿ Զ.

Թիֆլիս, Արշակունի 23-իս 1880:

ԱՆՁԻՆ ՔՈՂԻԿ,

Գուշակութիւնս ձիդ դուրս եկաւ. — գժբաղդութիւնը — և այն ինչպիսի դժբաղդութիւն — առաջին անգամ բաց արաւ մեր տան դուռն և ներս մտաւ՝ այնտեղից այլ ևս երբէք չհեռանալու մտքով: — Սենք համարեա մի անգամից գրկուեցինք մեր բոլոր կարողութիւնից, մեր բոլոր հարստութիւնից:

հայրս աջ ձեռքով և աջ ոտքով անդամալոյժ եղաւ և խելագարուեցաւ— Ահա թէ ինչ էր նրա բոլոր մտտանշութիւններէ, նրա գաղտնի վշտի, նրա օտարութի դրութեան հետեւանքը Իսկ պատճառը հօրս պարտքերն են եղել, որոնց գոյութեան մասին մենք նոյնքան տեղեկութիւն ունէինք, որքան տեղեկութիւն ունէինք, թէ մեր գլխին մի այսպիսի սարսափելի փորձանք պէտք է գար... Բայց մինչև հիմայ էլ գործանքից չեմ կարողանում ուշքի գալ, թէ հայրս այնքան պարտք էրք է արել և ինչ բանի համար... Մայրս ստում է, որ նա սատուիկ խաղացող էր. այդ ես ինքս էլ գիտէի, բայց միթէ խաղալով այդքան պարտքեր են անում, այդքան տանուլ են տալիս... Ա՛յ, ո՛չ, ես այդ ո՛չ մի կերպ չեմ ուզում հաւատալ և երբէք էլ չեմ հաւատալ... Ի՞նչ է, այն, ուրիշ մարդիկ այդպէս անեն, բայց իմ հայրս... Ի՞նչ խօ քիչ թէ շատ ճանաչում ես հօրս, դու խօ գիտես, թէ որքան ազնիւ, պատուասէր և հեռատես մարդ է նա. միթէ այդպիսի գեղեցիկ յատկութիւններ ունենալով, նա կարող էր չհասկանալ, թէ ապագայում ինչ սարսափելի հետեւանքներ կարող էր ունենալ խաղալու սէրը Ի՞նչ, մեծ է այդ սիրոյ, այդ սովորութեան ցանկութիւնը. մարդկային բոլոր գեղեցիկ յատկութիւնները կորցնում են իրենց զօրութիւնը դրա առաջ. այն, ճիշդ է այդ, հաւատալու է այդ... Ո՛վ ուզում է, թող այդ ճիշդ համարէ, ո՛վ ուզում է թող հաւատայ դրան, բայց ես չեմ հաւատում, չեմ հաւատում՝ որովհետև այդ անկարելի եմ համարում գոնէ հօրս վերաբերութեամբ... Ա՛խ, մի կարծիք, թէ որդեական անհուն սիրուց կուրացած միայն ես այսպէս պաշտպանում եմ հօրս. ո՛չ, ամենքը, ամենքն էլ, ով ճանաչում է նրան, կասեն, որ հայրս այդպէս թեթեւամտութեամբ չէր կարող վերաբերուել դէպի իւր և իւր ընտանիքի երջանկութիւնն ու պատիւը, որքան էլ նրա մէջ բուռն ցանկութեամբ գործէր խաղալու սէրը, սովորութիւնը. Ես ճանաչում եմ հօրս, ինչպէս ինքս ինձ. նրա բնատրութեան բոլոր

կազմը, նրա հոգին բաց էր իմ առաջ, որպէս մի պատկեր իւր պարզ ու որոշ գծերով, և ես համարձակ, առանց կող կողմնապահութեան պէտք է ասեմ, որ նրա պէս ընտանիքը պաշտող և դրա պատուի համար գլուխը ետ դրած մարդ ճրագով պիտի որոնել: Ամենավաղ մանկութիւնից, զխտակութեանս բացուելու օրից սկսած մինչև այժմ ես գեռ չեմ չիղում գէթ մի օր, երբ նա, թէկուզ ամենաչնչին կերպով, մօրս հետ կուռած լինէր կամ մեզ— իւր զաւակների վրայ ձեռք լինէր բարձրացրած, նա մեզ պահել է միշտ սիրոյ և խաղաղութեան մէջ, ազատ ընտանեկան ամեն տեսակ տարաձայնութիւններից և երկպառակութիւններից, նա մեր ամենաչնչին կողբիկներին անգամ անտրտունջ բաւականութիւն է տուել և ընտանիքի երջանկութեան ու պատուի նախանձախնդիր նրա սրտի մէջ մենք միշտ հովանի կայան ենք գտել. Եւ այդ բոլորից յետոյ, ասն, սիրելիս, միթէ ես իրաւունք ունեմ համարձայնուել թէկուզ ենթադրելու, որ այդ միևնոյն հայրս, որ միշտ անսիրտիս է մնացել իմ աչքում (և ես կերդուեմ, որ չեմ խաբուել), իւր ընտանիքի երջանկութիւնը, սրտիւր, ապագան, ամեն ինչ, որոնց համար նա կեանքը ետ ունէր դրած, այդպէս թեթեւամտօրէն տանուլ տար կանաչ սեղանի վրայ... Ա՛խ, որքան ծանր է, որքան ծանր է, սիրելի քոյրիկ... Այդքան ժամանակ, — ամբողջ քսան և մէկ տարի, ո՛չ մի ծանր վիշտ սեսած չլինելով մեր ընտանիքի մէջ, այժմ այս սոսկալի դժբաղդութեան առաջ զգում եմ, որ հոգիս շատ հեշտութեամբ է ընկճում... Եւ կարե՛լի է միթէ անվեհերութեամբ դէմ գնալ ճակատագրի մի այսպիսի հարուածին: Ո՛վ է ուշադրութիւն դարձնում, թէ զրկուեցինք մեր բոլոր կարողութիւնից. ես դրա մասին երբէք չեմ մտածում կամ գէթ ակոստում, այլ հայրս, հայրս. — ես տանջում եմ հօրս համար. Ես և մեր բոլոր ընտանիքը կորցրինք մի այնպիսի հայր, որպիսին կարող չէ տալ արխարհը իւր բոլոր գանձերով: Եւ դեռ փառք Աստուծոյ— այն, փառք

Աստուծոյ,—որ կաթուածն այնքան էլ սաստիկ չէր, ապա թէ ոչ, նա կարող էր բոլորովին անդամալուծանալ՝ կամ խոլոյն և եթ մեռնելը Բայց ամենից անելի ինձ տանջում, յուսահատեցնում է այն հանգամանքը, որ նրա խելքն այդ ևս գլխին չէ։ Արդեօք հասկանում ես, երևակայում ես դու, սիրելի քոյրիկ, թէ ինչ է նշանակում խելագարուած լինելը—Այդ նշանակում է, լինել մեծ մարդ և միևնոյն ժամանակ—երեսայն, այդ նշանակում է անել այն, ինչ որ շուրջը ոչոք չէ անում՝ և չանել այն, ինչ որ շուրջը ամենքն անում են։ այդ նշանակում է լիմարներն ծաղրածութեան և խելօքներն խղճահարութեան թշուառագոյն սուսրկայ լինելը։ այդ նշանակում է բնութիւնից անարգուած լինել, մարդկային իրաւունքներից զրկուած լինել, ապրողներն ցանկից դու կենդանութեան ժամանակ ջնջուած լինել։ այդ նշանակում է հազարաւոր ապրողներն մէջ ապրել իբրև արանձին մարդ, ինչպէս մի ամայի անապատի մէջ, որտեղ չընկալատող դէպք քեզ լուռ է և խուլ՝ և որտեղ դու ինքդ չընկալատող համար լուռ ես և խուլ։ այդ նշանակում է տեսնել և չճանաչել, լսել և չզգալ, տարել և չզգալ։ այդ նշանակում է կրքեր չունենալ—կեանքի խորհրդի այդ բանալիները։ Սոսկալի է, սոսկալի... մարմն չամոյլ զստ յամուտ մէջուան յամուտ ներքե, սիրելի, հոգիսնայի, նամակս երկար չեմ կարող շարունակել։ — ամբողջ հոգեկան աշխարհս փրուած, էրդու—

արտայ թոյլ ին որ զմաս մի գնն գնմ նայումը զմի քրս սմ լծածս ուր լցցցի ՆԱՄԱԿ է. աստուծոյ յուսարս գնաց - ո յոցմասսս յսան յամոյլ զս նորոյրոյ ծայցն ում զմաս նաման զգմ նարս միևնոյն մի ինքն ինքն սնծայմ գնող զյոյրարարումս յամուս զմ ինքն զյոյրարարումս մասս սլսս նմ - արտայ սոսկալի զմոս զմոս զմոս զմոս

Թիֆլիս, դեկտեմբերի 7-ին 1880.

Իմ բաղջրիկ ընկերուհի,

Նորհակալ եմ ցաւակցութեանդ համար։ Այո, լաւ կը լինէր, շատ լաւ, եթէ դու մօտս լինէիր. ես այժմ զգում եմ, թէ որքան կը թեթեւանար սիրտս այդ ժամանակ. բայց դու այդտեղից հեռանալդ անկարելի ես համարում։ Ես ինքս էլ գիտեմ, որ այդ անկարելի է, որ այդ քեզնից չէ կախուած, և այդ պատճառով ես երբէք չէի կամենալ, որ դու մի այդպիսի մեծ զոհաբերութիւն անէիր ինձ համար։ Ոչինչ։ Այն էլ բաւական է, որ մեր սրտերը կապուած ենք միմեանց հետ նամակագրութեամբ։ Մեր նախկին բնակարանից տեղափոխուեցինք. նա այդ ևս մեզ չէ պատկանում։ Այնտեղից մեզ վճարեցին,— գուցէ այդ վերջին բառը քեզ շատ կոպտս երևայ, բայց այդ այդպէս է,— մեզ վճարեցին քաղաքավարի կերպով և մեզ համար այդ առաւել ևս զգալի էր. . . Սրանի նրան, ու չէ զգացել, թէ ինչ է նշանակում իւր նախկին մշտական բնակարանից վերջնականապէս տեղափոխուել և այն ինչպէս,— ստիպուած, ահամայն իսկոյն զգում ես, որ սրտիցդ մի բան կտրուում է, ինչպէս այն ժամանակ, երբ սրտակից հակիդ յաւիտեան մնացիր բարև ես ասում։ Տան պատուհանները, դռները, պատերը, իւրաքանչիւր աղեսը, այնտեղ ընկած իւրաքանչիւր ծեղը զգում ես, որ անգին է քեզ համար և դու ոչ մի կերպ չես ուզում բաժանուել, անջատուել նրանցից ընդ միշտ։ Այո, շատ դժուար է, ծանր է, դառն է յաւիտեան թողնել և առաւել ևս—վճարուած լինելն անստեղից, որտեղ ծնուել և անց ես կացրել մանկութեանդ ոսկի ժամերը և որտեղի հետ կապուած են կեանքիդ ամենաբաղջր յիշողութիւնները։ Այժմ

մենք բնակուամ ենք մեր հին տանը, որ մի կերպ կարողա-
 ցանք ազատել պարտապանները ճանկերից: Գու տեսել ես այդ
 տունը՝ ետ ընկած փողոցում իւր խոնաւ, մուսլ պատերով, ո-
 ռոնք կարծես միշտ լաց են լինում: Ամեն անգամ, երբ մտնում
 եմ այս տան սենեակները, իսկոյն մի տեսակ անբացատրելի,
 բայց ծանր, սաստիկ ծանր վիշտ պատում է սիրտս. յուսահա-
 տութիւնն ու կատաղութիւնը միաժամանակ պաշարում են
 ինձ և դառն արտասուքն ակամայ խեղդում է կրկրոջս... Ա՛խ,
 Հռիփսիմէ, անգին քոյրիկս, որքան դառն, որքան անտանելի
 է կեանքը... Գոնէ նա այնքան չնչին չլինէր, գոնէ նա ունե-
 նար մի մեծ ճշանակութիւն, մի մեծ նպատակ, որի համար
 արժէնար կրել նրա տուած այսքան դառնութիւնները... Ոչնչի
 համար չարաչար տանջուել,— միթէ մարդս դրա համար է
 միայն ծնուած... միթէ մարդուս կեանքը, որ վերջանում է
 ոչնչով, նրա խորհուրդը պէտք է լինի նոյնպէս ոչինչ... միթէ...
 Ինչպիսի մուսլ մտքեր են պաշարում ինձ... Մտածութեանս
 թելը խճճուում է և յանկարծ կտրուում... Ոչնչութիւն, ոչն-
 չութիւն, ոչնչութիւն... Ես սարսափում եմ...

Ուկրտելուրի 8-իւ.

Երէկ ամբողջ մտաւոր և հոգեկան աշխարհս մի այնպիսի
 յուզմունքի մէջ բնկաւ, սիրելի Հռիփսիմէ, որ նամակս այլ ևս
 չկարողացայ շարունակել, գրեթէ վայր ձգեցի, իսկոյն դուրս գնա-
 ցի և, ինքս էլ չգիտեմ որտեղ և որքան ժամանակ, սխեցի
 թախտուել: Վերջին ժամանակներս այդպիսի օտարօտի յուզ-
 մունքներ ինձ շատ յաճախ են պատահում: Չնայելով, որ ես
 ոչ մի կերպ չեմ ուզում նրանց անձնատուր լինել, բայց նրանք
 ակամայ յափշտակում են ինձ: Եւ, զարմանալի է, չնայելով,
 որ նրանք ծանր, շատ ծանր են լինում, բայց այնու
 ամենայնիւ մի տեսակ անբացատրելի թեթևութիւն են տալիս

օրտիս,— ուրիշ կերպ ես ինչպէս բացատրեմ հոգեկան այն դու-
 թիւնը, որ ես ստանում եմ այդպիսի յուզմունքների ժամանակ:
 — մտքերի մէջ խորասուզուած՝ ես նայում եմ շուրջս— երկինքին,
 երկրին, ամբողջ բնութեանը, նայում եմ մարդկանց, կենդա-
 նիներին, թռչուններին, միջատներին, նայում եմ, նայում և
 յանկարծ զգում եմ, որ մի տեսակ հեգնական փախտ ակամայ
 ծամածռում է դէմքս: Ոչնչութիւն, ոչնչութիւն, ոչնչութիւն,
 — արտասանում եմ ինքս ինձ և զգում եմ, որ օրտիս մէջ այլ
 ևս ոչինչ վիշտ, ոչինչ դառնութիւն չկայ: մարդկային զգացո-
 ղական բոլոր կարողութիւններս կարծես միանգամից դադա-
 րում են գործելուց կամ ոչինչ կարևորութիւն չեն գտնում գոր-
 ծելու: Հաւատը, յոյսը և սէրը, որոնք մարդկային կեանքի հի-
 մունքն են համարում, կարծես փրշուում, չբանում են իմ մէջ
 և այնուհետև ամեն բանի, մինչև անգամ մեր թշուառութեան
 վրայ ես սխում եմ նայել խորին սառնասրտութեամբ, նոյն
 իսկ արհամարհանքով... Սակայն, բարեբաղդաբար, թէ դժբաղ-
 դաբար, այդ երկար չէ տևում: սակաւ առ սակաւ այդ օտա-
 րտի դրութիւնից ես դուրս եմ գալիս, որի միջոցին երբեմնակի
 սարսափի նման մի տեսակ անբացատրելի սարսուռ ցնցում է
 ողջ մարմնիս. կարծես մի ինչ-որ ոճրագործութիւն լինեմ կա-
 տարած... Ի վերջոյ առաջուայ վիշտը, դառնութիւնը նորից
 պաշարում է ինձ, հոգիս նորից ընկճում է, նորից սխում եմ
 տանջուել... Որքան զարմանալի է մարդկային հոգեկան աշ-
 խարհը, որքան մութ, որքան անբացատրելի և անսիմանալի
 խորշեր ունի նա:

Հօրս դրութիւնը նոյնն է, ինչ որ առաջ: Նա բոլորովին
 խելագարուած է, բայց նրա խելագարութիւնը շատ հանդարտ
 է, որի պատճառը կարծում եմ, որ անդամալուծութիւնը պի-
 տի լինի, որովհետև դա չէ թողնում, որ ազատ շարժումներ
 անէ կամ ազատ խօսի: Սակայն վերջին օրերս փաշտի կամ
 ուրիշի օգնութեամբ նա կարողանում է շատ կամաց ման գալ

տանը: Նա ոչ ոքի չէ կարողանում ճանաչել պատահում է երբեմն, որ մայրս կամ եղբայրներս մտնում են նրա մօտ, մխրում են խօսել նրա հետ, հարցնում են՝ արդեօք նա ճանաչում է իրենց, նա անթարթ, կարծես, ամենաչն մտառութեամբ նայում է նրանց դէմքին, անողջ ձեռքում միշտ խաղացներով իւր թաշկինակը, դէմքը շրջում է նրանցից և բոլորովին ոչինչ չէ պատասխանում: Ինձ էլ չէ ճանաչում, բայց ինձ հետ ամենքից էլ սիրով և քնքրութեամբ է խօսում: Երբ ես մտնում եմ նրա մօտ, ինչպէս նկատում եմ, նա շատ ուրախանում է, բայց եթէ ամբողջ օրերով ամենևին չերևամ էլ նրա աչքին, նա երբէք չի յիշել: Նրա խօսակցութիւնը շատ անմիտ է և անկապ: Հարցերին պատասխանում է, բայց ոչ այն, ինչ որ ուղղակի այդ հարցերին է վերաբերում, այլ բոլորովին ուրիշ բան: Նա ինձ միշտ «սիրուե՛ աղջիկ՝ է կանչում. անուես մտացել է և չընայելով, որ ես ամեն անգամ նրան այդ յիշեցնում եմ, բայց նա իսկոյն և եթ մոռանում է: Մի անգամ միայն—այն էլ հազիւ երկու ըրակ—նա ճանաչեց ինձ և լաց եղաւ: Սակայն վերջին օրերումս, ինչպէս նկատում եմ, նրա ուշքը քիչ-քիչ, շատ քիչ-քիչ սկսում է վրան գալ. իւր անցեալից նա մի-մի բան յիշում է և նոյն ըրակին էլ մոռանում, իսկ առաջ բոլորովին ոչինչ չէր յիշում: Այդ ինձ յոյս է տալիս, որ վերջ է վերջոյ նա գուցէ անողջանայ: Թող, թող, ինչպէս կուզէ անողջանայ, միայն թէ ներկայ դրութեան մէջ մինչև վերջը տեսնեմ նրան: Ի՛նչ չես կարող երևակայել, անգին բոլրիկ, թէ ինչ սոսկալի, ինչ անտանելի ամենզանք եմ կրում ես, երբ ամեն անգամ, մտնելով նրա մօտ, հանդիպում եմ նրա միշտ անմտորէն ժպտող հայեացքին և լուծ եմ նրա նոյնքան անմտ խօսակցութիւնը:

Անցեալ օրն էր: Ինչպէս միշտ, նոյնպէս և այդ օրն առաւօտեան ես մտայ նրա մօտ: Մօրս և ծառայի օգնութեամբ

նա վաղուց արդէն հազնուել և լուսացուել էր (պառաւտները նա միշտ վաղ է վեր կենում. առհասարակ նա շատ քիչ է քնում): Երբ ես ներս մտայ, նա մենակ նստած էր մահճակալի վրայ և թաշկինակն իւր սովորութեան համեմատ՝ խաղացնում էր ձեռքին: Ինձ տեսնելուն պէս նա դէմքը սաստիկ խօթորեց, (այդ առաջին անգամն էր, որ նա ինձ այդպէս էր հանդիպում) և յետոյ, երևի ճանաչելով, ժպտաց և, բարևելու փոխարէն, թաշկինակը քնքրօքէն իմ կողմը գցեց: Աս իսկոյն բռնեցի թաշկինակը, նախ քան նա գետին կ'ընկնէր, և նստեցի նրա մօտ՝ մահճակալի վրայ:

— օրնս — Հայրիկ, ինչպէս ես այսօր, — հարցրի ես, — թաշկինակը տալով նրան:

— Լաւ եմ, — պատասխանեց նա իւր մշտական, բայց այս անգամ կարծես ամօթլամ ժպտով և թաշկինակը նորեց ըսկեսց խաղացնել ձեռքին:

Հարցիս ուղղակի պատասխանն ինձ շատ ուրախացրեց:

— Բայց ինչո՞ւ է ցաւում, հայրիկ, — շտապով հարցրի այս անգամ կամօց գրկելով նրա մէջքը:

— Նա նայեց դէմքիս: Նա այլ ևս չէր ժպտում:

— Ի՞նչ, — հարցրեց նա, կարծես խորին մտառութեամբ:

— Սոսեմեմ՝ ինչո՞ւ է ցաւում, որտեղդ է ցաւում:

— Նա խորը հառաչեց և հայեացքը դարձրեց դէպև լուսամտը:

— Ծանօ վատ, շատ վատ, — արտասանեց նա կամաց, բայց այնքան սրտառուչ ձայնով, որ աչքերս իսկոյն լցուեցին արտասուքով: Ես աւելի ամուր գրկեցի նրա մէջքը և երկար ժամանակ ոչինչ վարողացայ արտասանել: Նա թաշկինակն այլ ևս չէր խաղացնում ձեռքին և՛ կարծես տխուր մտածութեան ընկնում: — Հայրիկ, մթթ է ինձ չես ճանաչում, — վերջապէս հարցրեցի ես:

Նա նորից նայեց ինձ, կարծես, աշխատելով մտաբերելու թէ ո՞վ եմ ես:

—Ոչ,—արտասանեց նա միայն:

—Ես Աննան եմ, հայրիկ, ես քո աղջիկն եմ,—բացաշխանեցի ես:

—Ես աղջիկ չունեմ,—անտարբերութեամբ արտասանեց նա և դէմքը նորից դէպի լուսամուտը դարձրեց:

—Ունես, ունես, հայրիկ, ինչպէս չէ, ունես աղջիկ,—այդ ես եմ, ես քո Աննան եմ, միթէ ինձ չես իշու՞մ:

Նա նորից անտարբերութեամբ գլուխը շարժեց միայն և ոչինչ չարտաստանեց: Ազատիկ յուսահատութիւնից, վշտից և անգործութիւնից ես սպասարատ էի աղիողորմ լաց լինելու, բայց կարողացայ զսպել ինձ:

Երկար ժամանակ մենք լուռ էինք: Առաջուայ անորոշ մտախոհութեամբ նա շարունակ նայում էր դէպի լուսամուտը, իսկ ես անթարթ—նրա դէմքին: Ո՞րքան դառն բաներ էր յիշեցնում ինձ այդ դէմքը, այդ գրաւելչ, այդ սիրուն, այդ փափուկ, քաղցր, միշտ ժպտող դէմքը, ու անողջ ժամանակ (հիմայ էլ) նայողին, կարծես, գգոււմ, փայփայում էր և ակամայ քաշում էր դէպի ինքը, սիրեցնել էր տալիս իրեն: Երեւակալութեանս մէջ կենդանի կերպով և զփծ առ զիծ ներկայանում էին նրա այնքան ծիծաղելի ծամածռութիւնները, որ նա տալիս էր իւր դէմքին կատակների ժամանակ: Ո՞րքան սագում էին նրան այդ ծամածռութիւնները, որքան շնորհքով էր անում նա իւր կատակները և որքան ես սիրում էի դրանց... Հենց որ նա սկսում էր իւր կատակները, ես իսկոյն սկսում էի ծիծաղել. ծիծաղում էի անդադար, մինչև որ մարմինս թուլանում էր, սիրտս ցաւում էր և աչքերս ջրակալում էին: Մի անգամ ես նստած էի դաշնամուրիս առաջ և նուագում էի մէկ ինչ որ բան, երբ յանկարծ կիսամ յոնքերով նա շտապով ներս մտաւ և մտակցաւ ինձ:

—Ա՛ննա, քէֆս խարար է,—ասաց նա, իբրև թէ, սաստիկ բարկութիւնից նեղացած.—թէ Աստուած կը սիրես վեր կաց, ուզում եմ մի «բեթլեհեմի սենատն» ամել:

«Բեահօլենի սոնատը» բառերի գիտութեամբ այդ աղաւաղած արտասանութիւնը լսելով, ես թողի դաշնամուրի ստեղունքները և ծիծաղից թուլացայ: Նա սկսեց ծաղրել ինձ իմ ծիծաղիս նմանացնելով, Գրանից իմ ծիծաղիս անելի սաստկացաւ. նա նոյնպէս սաստկացրեց իւր նմանողական ծիծաղը: Ես չկարողացայ դիմանալ, վեր թռայ և՛ կուրծքս բռնած՝ դուրս փախայ սենեակից:

Ա՛խ, ինչքան լուռ ժամանակ էր այդ. ինչքան երջանիկ էր նա, ինչքան երջանիկ էի ես, ինչքան երջանիկ էինք մենք ամենքս... իսկ այժմ... այժմ... Երջանիկ, բայց անդառնալի անցեալի և թշուառ ներկայի դառն գիտակցութիւնը յանկարծ այնպիսի սաստկութեամբ ճմլեց սիրտս, այնպէս ճմլեց, որ ես չեմ հատկանում, թէ ինչպէս կարողացայ դիմանալ այդ անասելի տանջանքին: Ես երկար չը կարողացայ մնալ նրա մօտ. արտասուքն արդէն խեղդում էր ինձ, ես դուրս եկայ և ինչպիսի դառնութեամբ ողբացի մեր երջանիկ, անդառնալի անցեալը...

Ընդունելը ողջոյնս, իմ անգին քոյրիկ:

Քո Աննա Սարգեան:

— սաս չի մոլորի ամ բոստ — Ի սպասի սփէյ ամմ Ը —
յի սնցոյ զի ճառասմ ԵՄՄԱԿ
յնճա մտամմս զնճճայե)մց. զն նմ նարստ քայ

ՆԱՄԱԿ

Քրիշիս, դեկտեմբերի 14-ին 1880, մի յոճոճով

Սրբիւն Հոսիսիմէ,

Հօրս ցաւելի դրութիւնն այն աստիճան գրադեցնում էր ինձ, որ մեր ընտանիքի միւս անդամներն մասին վերջին անգամներս, կարծեմ ոչինչ չէի գրում քեզ: Բայց նախ պէտք է ասեմ, որ հօրս դրութեան մէջ ոչ մի նկատելի փոփոխութիւն չէ կատարուել դէպի լաւը: Նա դարձեալ ոչ ոքի չէ ճանաչում Մայրս, որ սկզբներում սաստիկ վշտում էր և համարեայ թէ միշտ լաց էր լինում, այժմ, կարծես, հարտուել է իւր դրութեան հետ և ես այլ ևս ոչ մի սրտունջ չեմ լսում նրա բերանից: Նա, կարծես, տեղն ու տեղը սպուել է: Ամեն օր վաղ առաւօտեան մտնում է հօրս մօտ, հագցնում է, լուսացուել է տալիս նրան, թէյ է խմեցնում, ձեռքից բռնած՝ սենեակում մի քանի անգամ անց ու դարձ է անել սպախ, կէս օրին իւր ձեռքով ձաշ է ուտեցնում, երեկոյեան դարձեալ թէյ, գելերը հանում է և պարկեցնում է քնելու, — և այդ բոլորը նա կատարում է լուռ: Երբեմն միայն խորը հառաչում է: Շատ անգամ գելերները նա լուսացնում է հիւանդի մօտ՝ աթոռի վրայ, չնայելով որ ես ամեն կերպ թախանձում եմ նրան, որպէս զի այդ պաշտօնը կատարելու մշտական ինձ թողնէ: Ամեն անգամ, քանի նայում եմ նրա գունատ, նիհարած դէմքին և անկենդան աչքերին, սաստիկ վշտից և կարեկցութիւնից սրտոս քամ է ընկնում: Իսկոյն երեւակայում եմ, թէ որքան մեծ պիտի լինի այն լուռ վշտը, որ բոյն է դրել նրա սրտում: Սակայն միայն հօրս դրութիւնը չէ, որ նրան այդպէս տանջում է: Գրեգորի դրութիւնն էլ պակաս մտատանջութիւնների առարկայ չէ նրա համար: — Նամակներինցս մէկի մէջ, կարծեմ, գրել էի քեզ, որ

Գրեգորը սաստիկ հագում է և բփռկներն խորհուրդով առ ժամանակ դադարել է գիմնագիտոն յաճախելուց: Իսկ այժմ պիտի ասեմ, որ նրա դրութիւնն աւելի վատացել է: Այդքներում նրա հագը թէև բոլորովին կտրուեց, բայց երկու շաբաթից յետոյ նորից լոյս ընկաւ և մինչև այժմ էլ շարունակուում է, որ օրն վրայ սաստիկանալով, այնպէս որ ոչ գելերը քուն ունի, ոչ ցերեկը — հանգիստ: Ասումը շարունակելու մասին առ այժմ կարելի չէ մտածել անգամ: Հօրս դրութեան հետ ես համարեա հաշտուել եմ, բայց այժմ սկսել է տանջել ինձ դրա — Գրեգորի դրութիւնը, և այդ տանջանքը պակաս տանջանք չէ: Եթէ դու գոնէ մի անգամ տեսնես, թէ որքան նա փոխուել է և լսես նրա հագը, կը սարսախես:

Նրէկ առաւօտեան ժամը տասն և մէկն էր, բայց նա դեռ չէր վերկացել անկողնից: Չնայելով, որ ձմերային ցուրտն ու խոնավութիւնը ստիպում են նրան տնից դուրս չգնալ, բայց առաւօտները նա միշտ իւր ժամանակին էր վեր կենում և օրուայ միջոցում համարեա երբէք չէր պառկում անկողնում, որքան էլ իրեն թոյլ գգում լինէր: Բայց ինչո՞ւ այդ օրը մինչև այդ ժամանակ դեռ չէր վեր կացել անկողնից: Փոքր ինչ վախեցած՝ ես ճերս մտայ նրա սենեակը: Նա պառկած էր հանգիստ՝ երեսը պատի կողմն արած: Սո կարծեցի, թէ քնած է, այդ պատճառով, որպէս զի չանհանգստացնեմ նրան, զգուշութեամբ մօտեցայ նրա մահճակալին: Բայց նա քնած չէր: Նրա աչքերը բաց էին և, ինչպէս երևում էր, անձնատուր էր եղել խոր մտածութեան: Սո կամաց կուացայ դէպի նրա դէմքը: Նա տեսաւ ինձ, բայց մնաց նոյն դրութեան մէջ, ինչպէս որ կար:

- Գրեգոր, Բնչպէս ես, — կամաց հարցրի ես:
- Լաւ եմ, քոյրիկ, — սլատասխանեց նա շատ հանդարտ ձայնով:
- Բայց ինչո՞ւ մինչև հիմայ պառկած ես:

—Վեր կացայ, բայց որովհետև այսօր շատ ցուրտ էր, նորից պառկեցի:

Նս մնացի կուացած նրա դէմքի վրայ: Նա այնքան հանգիստ էր, որ կարծես բոլորովին չէր շնչում:

—Գրեգոր, ի՞նչ ես մտածում, — երկար լռութիւնից յետոյ հարցրի ես:

Նա իւր հանգիստ հայեացքը ինձ դարձրեց:

—Ե՛ս, — հարցրեց նա:

—Այո:

—Նս ոչինչ չեմ մտածում:

Նա շուռ եկաւ մէջքի վրայ և ուղղակի նայեց աչքերիս:

—Ինչո՞ւ աչքերդ միշտ այդպէս կարմիր են, — հարցրեց նա:

—Իմ աչքերս կարմիր չեն, — փոքր ինչ շիտթուած, բայց որքան կարելի էր հանգիստ ձայնով արտասանեցի ես և վերմակով ծածկեցի նրա բաց կուրծքը:

Նրա դէմքն անբաւարան արտայայտութիւն ստացաւ:

—Է՛հ, Աննա, դու քեզ ամենևին չես խղճում, — արտասանեց նա տխուր ու մեղմ յանդիմանութեամբ և նոյն ըոպէին սաստիկ, չոր հազը կարծես պատանեց նրա սիրտը: Նա խփոյն շուռ եկաւ պատի կողմը, գլուխը քիչ բարձրացրեց բարձի վրայից, հագաց, հագաց և անկողնի տակից հանելով իւր սպիտակ թաշկինակը, թքեց վրան: Նս սարսափեցի. թաշկինակի վրայ արևն տեսայ, որ առաջ երբէք չէի տեսել:

—Գրեգոր, այդ ի՞նչ է, — բացականչեցի ես ակամայ:

Նա արագութեամբ թաշկինակը պահեց անկողնի տակ:

—Ի՞նչ է, — հարցրեց նա հագից հանգստացած, բայց սաստիկ թուլացած ընկնելով բարձի վրայ:

—Ի՞նչ արիւն ես թքում:

—Է՛հ, յիմար բան է, — արտասանեց նա, իբրև թէ, արհամարհանքով: — արժէ՞ դրա վրայ ուշադրութիւն դարձնել:

—Վաղուց է, ինչ արիւն ես թքում:

—Վաղուց է:

Նս անհուն սիրով և միւսնոյն ժամանակ սարսափած մի ձեռքով կամաց գրկեցի նրան. զգում էի, թէ ինչպէս սիրտս մարում է: Նս ոչինչ չկարողացայ արտասանել: Նա կարծես հասկացաւ, թէ այդ ըոպէին ինչ անցաւ մտքովս և ինչ էր կատարում իմ մէջ: Նա շատ տխուր ու մեղմօրէն ժպտաց, և ես կեանքումս երբէք չեմ մոռանալ այն հայեացքը, որ նա այդ ժպտի հետ ձգեց իմ դէմքին. բայց նա ոչինչ չարտասանեց, միայն ձեռքը հանեց վերմակի տակից և կամաց, քնքօրէն ուղղեց ձախտիս վրայ թափած մագերէ:

—Այսօր հայրելի մօտ եղի՞ր ես, — երկար լռութիւնից յետոյ հարցրեց նա:

—Նղել եմ:

—Ի՞նչպէս է:

—Ինչպէս առաջ:

—Քեզ դարձե՞ալ չճանաչեց:

—Ոչ:

—Մեղանից ոչ ոքի՞ անունը գոնէ չէ տալիս:

—Ոչ:

—Մայրիկին է՞լ չէ ճանաչում:

—Ոչ ոքին:

—Ի՞նչ է խօսում:

—Համարեա ոչինչ, միշտ լռում է:

—Նրևի չէ կարողանում խօսել, կաթուածը խանգարում է:

—Նրևի:

Մենք երկուս էլ լռեցինք:

—Ինչո՞ւ ես ինձ այդպէս նայում, քոյրիկ, — վերջապէս հարցրեց նա:

Յանկարծ զգացի, որ արտասուքը խեղդում է ինձ: Արա-

գութեամբ համբուրեցի նրա ճակատը, թողի նրան և ուղղուեցայ դէպի դուռը:

— Ա՛նճա, — կանչեց նա ետևիցս: Ես կանգ առայ, առանց նրա կողմը նայելու: — Մայրեկին ոչինչ չասես:

Իսկոյն հասկացայ, որ խօսքն արեան մասին էր:

— Չեմ ասել, — արտասանեցի ես որքան կարող էի հանգիստ ձայնով, որ, սակայն, չաջողուեց ինձ, և շտապով դուրս գնացի: Եւ այդ ժամանակ թէ՛ որքան և ինչպէս լաց եղայ ես, սիրելի քոյրիկ, — դրա մասին լուռ եմ: Մի անգամից սրտիս մէջ փշուրեցաւ բոլոր, բոլոր յոյսս:

Քո Անճա Սարգեան:

ՆԱՄԱԿ Թ.

Թիֆլիս, դեկտեմբերի 21-ին 1880.

Իմ սիրելի Հռիփսիմէ,

Չեմ յիշում որ բանաստեղծն է ասում՝ «Թշուառութիւնը մենակ չէ գալիս», և այդ ճիշդ է: Մեր անկումը որքան թշուառութիւններ բերեց իւր ետևից և, ո՞վ գիտէ, դեռ էլի որքան է բերելու: — Հայրս անդամարոճ եղաւ և խելագարուեցաւ, Գրեգորի գրութիւնն օր օրի վրայ սկսեց վատթարանալ, մայրս ոտի վրայ հարում է, իսկ այժմ հերթը հասել է միւս երկու եղբայրներին: — մեծին, Արշակին, ահա երբորդ շարաթն է գնում, ինչ հեռացրել են պաշտօնից իւր անչափ արբեցողութեան համար, իսկ փոքրին — Գարեգնին վռնելել

են ուսումնարանից իւր ծուլութեան համար: Գրանք էլ պակաս թշուառութիւններ չեն մեր ներկայ դրութեան մէջ, մանաւանդ առաջինը — մեծ եղբորս անպարտօն մնալը, որովհետև մեր ողջ ընտանիքի միակ յոյսը նա էր: Մեր նախկին հարստութիւնից դեռ էլի մի բան մնացել է մեզ և մենք, փառք Աստուծոյ, դեռ բոլորովին նեղը չենք ընկել, բայց երբ այդ «մի բանն» էլ կը հասնի և չքառորութիւնը (ո՞վ գիտէ, գուցէ և ծայրագեղ աղքատութիւնը) ներս կը մտնէ մեր տուն, այն ժամանակ ի՞նչ պիտի անենք, ինչո՞վ պիտի ապրենք, ինչո՞վ պիտի կերակրուենք... Այժմից արխես սրտում է, դառն, անտանելի դառն մտածմունքները ճնշում են հոգիս, երբ երևակայում եմ, թէ մօտիկ ժամանակներում ինչ սոսկալի ապագայ է սպասում մեզ: — Աղքատութիւն... Անգին քոյրիկ, արդեօք հասկանում ես, թէ ինչ է նշանակում այդ բանը մեզ համար: — Ես դրան միշտ երևակայում եմ, որպէս հազար գլխանի մի հրէշ, որ մեզ իւր սառ զրկի մէջ առամ՝ իւր միլիօնաւոր սարսափելի ժանիքներով դժոխային անյագ բաւականութեամբ կամայ-կամայ պիտի քաղէ մեր հոգին: Ո՛հ, հազար անգամ աւելի լաւ է, որ մարդ առաջուց մեռնի, քան մի օր անգամ զգայ իրեն այդ սոսկալի հրէշի զրկի մէջ, սալա թէ ոչ մարդս ամբողջապէս երկաթից պիտի լինի կազմուած, որպէս զի կարողանայ տանել դրա բարոյական և ֆիզիքական բոլոր հարածանքները: Գուցէ խօսքերս քեզ չափազանցութիւն թուան, սիրելի քոյրիկ, գուցէ աղքատութիւնն իսկապէս այժբան էլ սարսափելի չէ, ինչպէս ես եմ նկարագրում, բայց ես ուրիշ կերպ գրան չեմ կարող երևակայել: Ի նկատի ունեցիք, թէ մինչև այժմ ես ինչպէս եմ մեծացել, կենսական ինչպիսի պայմաններում և այսուհետև ինձ ինչ է սպասում, ինչպիսի կեանք: Մանկական հասակիցս ես շրջապատուած եմ եղել դաշտակներով և աղանխներով. ես երբէք չեմ իմացել, թէ ինչ է նշանակում չոր կամ սև հաց. կերակուրս միշտ կաթ է եղել և ամենահամեղ խորտիկներ:

Յրբ հագուստիս վրայ մի աննշան իւղ է կաթել կամ ծայրը փոքր ինչ պատուել, ես այլ ևս չեմ հագել այն: Յրբ՝ մագազիններն առաջով անցնելիս՝ նրանց լուսամուտներն վրայ դարստամ իրեղէններն մի որ և իցէ բան հաւանել եմ, նոյն օրն և եթ դա իմս է կղել: Յրբ մի որ և իցէ ինձ պէս հարուստ օրերդէ հագին տեսել եմ մի որ և իցէ նորաձև շքազգեստ, գլխարկ կամ մի ուրիշ բան և հաւանել, մի քանի օրն յետոյ ես էլ ունեցել եմ այնպիսին: Մի խօսքով ես միշտ ապրել եմ լիութեան և վստիկակեցութեան մէջ: Բայց յանկարծ այդ բոլորն յետոյ—Ճայրայեղ թշուառութիւն, Ճայրայեղ աղքատութիւն, սև, չոր հաց—և այն ոչ միշտ,—մութ սենեակ, անվերջ աշխատանք, մերկութիւն, ցուրտ, հլւանդութիւն, անվերջ զբոհանքներ, վիշտ, տառապանք, լաց, ողբ, հալածանք, արհամարհանք, սառ կարեկցութիւն, վիրաւորանք, ամօթ, անպատուութիւն, անգօր բարկութիւն, անպաշտաճունութիւն, տանջանք, անվերջ տանջանք... Ո՛հ, բաւական է. երևակայելով անգամ կարելի է խելագարուել...

Ա. Ս.

ՅԱՄԱԿ Ժ.

Թիֆլիս յու. Առուարի 2-ին 1881.

Սերելն Հռիփսիմէ,

Ահա և նոր տարին: Յկաւ և իւրաքանչիւրի համար նշէր բերեց այն, ինչ որ նա առաջ էլ ունէր.— երջանիկներն՝ նոր երջանկութիւն, ուրախացողներն՝ նոր ուրախութիւն, ժպտողներն՝ նոր ժպտանք, իսկ թշուառներն՝ նոր թշուառութիւն,

տանջողներն՝ նոր տանջանքներ, արտասուողներն՝ նոր արտասուք... Իւրաքանչիւրն իւրը.— Սշխարհի սկզբից մինչև այժմ բոլոր նոր տարիներն այդպէս եկել են, այդպէս գալիս են և այդպէս էլ կը գնան: Անխոնջ ժամանակն իւր յաւիտենական ընթացքն այդ որոշ շրջանառութիւններն սկզբնաւորութեան մէջ միայն հաստատում է այն, ինչ որ ցանել են այն անշեղ, անիմանալի օրէնքները, որոնք ընդհանուր անուսով կոչում են բ ա ղ դ: Եւ դեռ մարդիկ նախապաշարմունքով են նայում նոր տարու վրայ. ագաս երջանիկները նոր ոսկի ժամեր են ուզում, կարօտ թշուառները—մի քիչ պայծառ ըրպէներ: Երջանիկներ, դուք ստանում էք ձերը, բայց, թշուառներ, ինչո՞ւ դուք ստանում էք դարձեալ այն, ինչ որ արդէն ունէիք:—Իւրաքանչիւրն իւրը,—հանդիսաւոր կերպով աղաղակում է անտարբեր ճակատագրը՝ անհօգ նոր տարու հետ զուգընթաց սլանալով աշխարհն մի ծայրից միւսը:

Մենք էլ ստացանք մերը, այսինքն՝ նոր թշուառութիւն, նոր արտասուք, նոր տանջանքներ... Ո՛հ, եթէ կարողանայի գոռոզ սրտով և խորին արհամարհանքով նայել անամօթ նոր տարու զգուելի ժպտանքներն, եթէ կարողանայի արգելել նրա մուտքը գլխակցութեանս մէջ,—ես վիրաւորուած հպարտութեամբ կը նայէի նրա լիւր երեսն, անտարբերութեամբ կը շքէի նրանից դէմքս և սիրելով տանջանքներս՝ կը փայտայէի նրանց սրտիս մէջ և հերոսաբար կը տանէի նրանց: Բայց մարդկային հոգեկան կազմը կամքին երբէք չէ հպատակում, նա գործում է այնպէս, ինչպէս թելադրում են նրան բնութեան անկախ օրէնքները: Ո՛հ, թշուառ մարդ, դու ի՞նչ ես արել...

Նրէկ, նոր տարու օրը, առաւօտուանից փակուելի սենեակումս և ողջ օրը մտադրել չէի դուրս գալու այնտեղից: Նոր տարին կատաղութեան և ատելութեան մի այնպիսի զգացմունք էր ներշնչել ինձ, որ ես այդ օրը կատարելապէս ոչ ոքի չէի ուզում տեսել, — ոչ հօրս, ոչ մօրս, ոչ եղբայրներնս, ոչ քրն. ես ուզում էի կեղծ-

Նաճալ միայն իմ մէջ, ես ուզում էի մոռանալ ամենքին և ամեն ինչ... Ի՞նչ է ուզում ինձնից նոր տարին, — ասում էի ինքս ինձ, — երբ ես նրանից ոչինչ չեմ ուզում: — Եւ, իրաւ, եթէ հաստատապէս գտե՛նայի — և այդ հնարաւոր լինէր, — որ նոր տարին այդ օրը պիտի վերադարձնէր ինձ վաղաթուիչ ոսկի անցեալս, ես կը մերժէի և ներկայ թշուառութեանս մէջ ինձ երջանիկ կը համարէի, եթէ այդ օրը նա անցնէր մօտովս և ոչինչ ուշք չդարձնէր վրաս, իբր թէ արևարհիս երեսին այդ օրուայ հազարաւոր մեռածներից մէկն էլ ես եմ: Եւ կը հաւատաս առդեօք, սիրելի քոյրիկ՝ — այդ ժամանակ ես ինձ բնաւ թշուառ չէի գգում. արդեօք այդ նրանից էր՝ որ ես չափից դուրս արդէն թշուառ էի, թէ նրանից՝ որ նոր տարու դէմ սաստիկ կատաղութեան գագացմունք էր գարթել իմ մէջ, — չգիտեմ, միայն այս ճշմարիտ է, որ ես այդ ժամանակ առաջուայ պէս չէի տանջուում: Մի տեսակ կարկանդումն տիրել էր ինձ, ես ինձ վեհանձն սառնասիրտ էի գգում. կարծես մէկին ինձ սաստիկ վիրաւորել էր և ես երբէք չէի կարող նրան ներել: Սո հպարտանում էի դրութիւնովս, և այժմ էլ գգում եմ, թէ ինչպէս արհամարհանքով էի նայում մինչև անգամ ինձ շրջապատող առարկաներին:

Օրը շատ սխուր էր. երկինքը սրտած էր այն ծանր, միակերպ մոխրագոյն մառախուղով, որ նայողի վրայ ծուլութիւն և քուն է բերում: Զիւնը գալիս էր սաստկութեամբ: Նրա փաթիլներն՝ անթիւ համատարած ձանձերն նման օդի մէջ միմեանց խառնուելով և՛ կարծես գոհ իրենց վիճակից՝ թեթև կերպով ընկնում էին գետին: Քամու թեթև շունչն ընդհանուր հոսանքից երբեմն շեղում էր մի քանի փաթիլներ և հազիւ լսելի ձայնով խիում էր լուսամուտիս ապակիներին: Անենակումս ցուրտ էր. վառարան վառում ենք միայն հօրս և Գրիգորի սենեակում: Շալի մէջ ամուր փաթաթուելով, վերցրի Գոստուսկին և սկսեցի կարդալ, թէ և կարդալու ամենեւին ցանկութիւն չունէի: Ես ուզում էի մի կերպ սպանել այդ անստանելի օրը և

դրա համար պատրաստ էի ամեն բան անել: Գոստուսկին ես երբէք չեմ սիրել. առաջ մի քանի անգամ փորձել էի կարդալ և ամեն անգամ հենց առաջին երեսների վրայ ձանձրացել ու շարտել էի մի կողմը, բայց այս անգամ — չգիտեմ ինչո՞ւ — դա գրաւեց ինձ: Թէ և սկզբում կարդում էի մեքենայաբար և կարդացածիցս համարեա ոչինչ չէի հասկանում, բայց հետզհետէ մտառութիւնս լարուելով՝ այնպիսի հետաքրքրութեամբ ըսկսեցի կարդալ, որ ի վերջոյ բոլորովին անձնատուր եղայ ընթերցանութեանս: Զգիտեմ որքան ժամանակ էր, ինչ կարդում էի, երբ սենեակիս դրան բացուելը ուշադրութիւնս իւր կողմը գրաւեց: Ներս մտառ մայրս: Նա նոյնն էր, ինչպէս ես տեսնում էի նրան ամեն օր. — նոյն անզգայ քայլուածքը, նոյն մեքենայական շարժումները, դէմքի նոյն մեռած արտայայտութիւնը, միայն այս անգամ նրա աչքերն աւելի մեծացած էին, դէմքն աւելի գունատ էր: Ամեն տարի նոր տարու օրը միշտ, ինչպէս հարկըն է, առաջին անգամ ես եմ մտել մօրս մօտ՝ շնորհաւորելու նրան նոր տարին, բայց այս անգամ, երևի հասկանալով դրութիւնս և տեսնելով, որ ես երկար ժամանակ սովորութեանս համեմատ չեմ մտնում իւր մօտ, նա առաջինն ինքն էր գալիս ինձ մօտ: Նրա դէմքին նայելով, ես խնդրեմ հասկացայ, որ այդ այդպէս է: Նա մօտեցաւ ինձ:

— Շնորհաւոր նոր տարի, աղջիկս, — արտասանեց նա դողդոջուն ձայնով, գրկից ինձ և համբուրեց ձախատո:

Այդ ըոպէին յանկարծ չգիտեմ ինձ ի՞նչ պատահեց, միայն քիչ յետոյ գգացի, որ ես ամուր, ամուր սեղմում եմ նրա մէջքը ձեռքերովս, դէմքս ծածկած ունիմ նրա կուրծքի մէջ և դառն, անտանելի դառն արտասուքները խեղդում են ինձ: Ո՞ւր չբացաւ արդեօք առաջուայ սառնասրտութիւնս, անտարբերութիւնըս, կատաղութեան և ատելութեան գագացմունքներս, — արպիւսի բան ես այլ ևս չէի գգում. գգում էի միայն առաջուայ ինձ

Ճանօթ վերադ, որ այս անգամ կրկնապատիկ սաստիկութեամբ էր ձմրում սիրտս:

Մայրս իմ գլուխն առել էր իւր երկու ձեռքերն մէջ և ես գգում էի, որ նա նոյնպէս արտասուում է և քնքշօրէն համբուրում մագերս: Վերջապէս ես գսպեցի ինձ, թողի նրա մէջքը և նայեցի նրա դէմքին: Նա նոյնպէս թողեց ինձ:

— Ինչո՞ւ հանգստացած սիրտս նորեց վրդովեցիր, — ասացի ես ակամայ անբաւականութեամբ և զգացի, որ ձայնս այնպէս չէ հնչում, ինչպէս ես ամեն օր խօսում էի նրա հետ:

Նա, ըստ երևութին, հասկացաւ, թէ դրանով ես ինչ էի ուզում ասել, կամաց, շատ կամաց հառաչեց և, երևի, ծանր բոպէն աւելի չձանրացնելու համար, ոչինչ չպատասխանեց, այլ միայն հարցրեց.

— Ինչո՞ւ ես այս ցուրտ սենեակում նստել: Խօ կը մըսես:

— Ես վճռել եմ այսօր այս սենեակից բոլորովին դուրս չգալ, — ինքս էլ չիմանալով, թէ ինչ բանի համար՝ բարկացած պատասխանեցի ես և Գոստոսիկին նորեց ձեռքս առայ:

— Ես քեզ ինչ եմ արել, որ դու ինձ վրայ բարկանում ես, Աննա, — կարճ լռութիւնից չետոյ՝ ասաց նա մի այնպիսի անմեղ և տխուր եղանակով, որ կարծեցի թէ սիրտս հազար կրտոր արին:

— Իսկ ե՞ս քեզ ինչ եմ արել, որ դու ինձ այնպէս տանջում ես, — աղաղակեցի ես, գիրքը սաստիկութեամբ շարտելով յատակի վրայ և, դէմքս ծածկելով ձեռքերիս մէջ, սաստիկ, ցնցողաբար լաց եղայ:

— Երբ որ այդպէս է, ես դուրս կը գնամ, — կարծես ներօղութիւն խնդրելով, ասաց նա և ուղղուեց դէպի դուռը:

Ես խելագարի նման վեր թռայ տեղիցս, հասայ նրան և բռնեցի նրա ձեռքից:

— Ի՞նչ ինձ չես հասկանում, մայրիկ, — բացականչեցի ես սաստիկ խղճահարուած և անտանելի տանջանքով: — Ես բարկա-

նում եմ ոչ թէ քեզ վրայ — դու ինձ ինչ ես արել, — այլ բարկանում եմ... ինձ վրայ, միայն ինձ վրայ... չիմարութեանս վրայ, բնաւորութեանս վրայ, մտածմունքներես վրայ, տանջանքներէս վրայ...

— Աննա, սիրելիս, — իւր մեղմ, տխուր, փաղաքշող ձայնով արտասանեց նա. — Եթէ քեզ չես խղճում, գոնէ ինձ խղճա: Ներկայ դրութիւնս միթէ բաւական չէ, որ դու ուզում ես նոր հոգսեր և տանջանքներ էլ պատճառել ինձ: Տեսնո՞ւմ ես ինչ եմ դառել այս մի քանի ամսուայ մէջ...

— Այլ ևս չեմ անել, անգին մայրիկ, ներիւր ինձ: — բացականչեցի ես և անհուն սիրով փաթաթուեցի նրա վզով:

Այդ բոպէին ես ինչ չէի անել, ինչ գոհաբերութիւններ, միայն թէ նրան հաւատացրած լինէի, որ նրա իւրաքանչիւր տանջանքն ինձ համար հազարաւոր տանջանքներ արժէ:

Նա ձեռքով կամաց փաղաքշեց գլուխս և ասաց.

— Աննա ջան, մտածմունքներին անձնատուր մի լինիւր և խուսափիւր մեծակութիւնից: Ինչո՞ւ այսօր փակուել ես այստեղ և չես ուզում դուրս գալ... Աւելի լաւ չի՞ լինիլ, եթէ գնաս Գրեգորի մօտ և խօսես նրա հետ կամ՝ թէ չէ, եթէ ուզում ես կարուալ, կարդաս նրա մօտ, որպէս զի նա էլ լսէ. է գուր խեղճը պտուկած է մեծակի:

— Ի՞նչ գնա, մայրիկ, ես էլ խօսոյն գալիս եմ, — շտապով ասացի ես, թողնելով նրան: — Ի՞նչոյն գալիս եմ, գնա:

Նա դուրս գնաց:

Ես անմիջապէս լուացի աչքերս և նստեցի, որպէս զի սիրտը խաղաղի: Ես չէի ուզում, որ Գրեգորն իմանար, թէ յուզուել և լաց եմ եղել. այդպիսի դէպքերում նա ինձ միշտ չանդիմանում էր: Երբ բաւական հանգստացայ, դնայի նրա մօտ: Բոլորովին հազնուած՝ նա նստած էր անկողնի վրայ և՛ գլուխը ձեռքին չենամ՝ թէկի՛ն էր տուել բարձին. բայց իմ մտնելուն պէս՝ նստեց ուղիղ և խոր նայեց աչքերիս: Ինձ թուաց, որ նա

խկոյն հասկացաւ, թէ ինչ էր կատարուել իմ մէջ և, չնայելով, որ այս անգամ նա բոլորովին ոչինչ չասաց ինձ, բայց նրա հայեացքն էլ բաւական էր, որ ես շիոթուէի ու ամաչէի, ինչպէս նրա յանդիմանութիւններն ժամանակի: Ես բարեւեցի նրան և նստեցի նրա մօտ՝ աթոռի վրայ:

—Շնորհաւոր նոր տարի, քոյրիկ,—առանց իմ բարեին պատասխանելու, ասաց նա մի այնպիսի եղանակով, որից իսկոյն իմացայ, որ դրանով ուզում էր ինձ հասկացնել, թէ բարեւեց առաջ այդ պէտք էր ասել և թէ այդ ասելն առաջ ինձ էր պատկանում:

—Ա՛խ, դու է՛լ,—բացականչեցի ես դառնութեամբ.— ի՛նչ էք տեսել այդ անխճեալ նոր տարու մէջ, որ ամենքէ էլ շնորհաւորում էք ինձ:

—Շնորհաւոր նոր տարի, քոյրիկ,—կրկնեց նա առաջուանից աւելի հաստատ ձայնով և ժպտալով մեկնեց ինձ իւր ձեռքը:

Ես լուռ տուի նրան իմը: Նա սեղմեց, յետոյ համբուրեց և նորից թէկի տուեց բարձին:

—Նոր տարին քեզ ի՛նչ է արել, Աննա, որ նրան այդպէս ատում ես,—կարճ լուռութիւնից յետոյ հարցրեց նա, անթարթ նայելով աչքերիս:

Ես շիոթուեցի, չիմացայ ի՛նչ պատասխանեմ: Իրաւ, ինչո՞ւ նոր տարին ատում էի,—ինքս էլ չգիտէի:

—Որովհետեւ նախապաշարմունք է,—չանկարծ և մեքենայաբար պատասխանեցի ես բերանիս եկածը:

—Ի՛նչը, նոր տարին թէ շնորհաւորելը:

—Շնորհաւորելը:

Նա ժպտաց և նրա այդ ժպտը, կարծես, ասում էր՝— ինչո՞ւ ես ատում այն, ինչ որ չես ուզում ասել:

—Մի՞թէ նախապաշարմունք չէ այն,—նկատեց նա,—որ

այժմ բարեւեցիւր ինձ: Ի՛նչ զանազանութիւն կայ առօրեայ բարեւելու և նոր տարին շնորհաւորելու մէջ:

Զգացի, որ կտրմորում եմ: Ես ոչինչ չպատասխանեցի և աչքերս վայր թողի: Կարճ ժամանակ երկուսս էլ լուռ էինք: Ես զգում էի, որ այդ միջոցին մի առանձին հայեացքով նա անթարթ նայում է դէմքիս:

—Գիտե՛ս ի՛նչ կայ, Աննա,—վերջապէս խօսեց նա շատ լուրջ ձայնով, որ ես առաջին անգամն էի լսում նրանից ինձ հետ ունեցած խօսակցութեան ժամանակ.—Այս վերջին ժամանակներս ես նկատում եմ, որ դու այլ ևս այն չես, ինչ որ առաջ:

Ես հետաքրքրութեամբ և միւսնոյն ժամանակ մի տեսակ անբացատրելի երկիւղով նայեցի նրան: «Ի՛նչ է ուզում ասել», ակամայ հարցրի ինքս ինձ: Նա ուղղակի և շատ լրջօրէն, մինչև անգամ խօսորէն նայում էր աչքերիս:

—Այո՛, ես նկատում եմ, որ դու այլ ևս այն չես, ինչ որ առաջ,—կրկնեց նա առաջուայ նման,—և այդ պատճառով ես ուզում եմ քեզ հետ այդ բանի մասին խօսել լրջօրէն: Առաջ դու միշտ ուրախ էիր, միշտ անհոգ, միշտ ժպտում կամ ծիծաղում էիր, ո՛չ մի ժամանակ ես քեզ չէի տեսել, որ դու տխուր լինէիր կամ մի որ և իցէ բանի մասին լուրջ մտածէիր, թէև մեր շուրջը, առօրեայ կեանքի մէջ միշտ եղել են թէկուզ մեր անձնակազմութեանն ուղղակի չլեքաբերուող այնպիսի երեւոթներ, որոնց մասին արժէր և արժէ, որ ամեն մէկը տխրէր և լուրջ մտածէր: Մի խօսքով՝ դու առաջ քեզ կատարելապէս երջանիկ էիր զգում. . . Իսկ այժմ միշտ տխուր ես, միշտ լաց ես լինում, միշտ մտածում ես, մի թեթեւ ժպտ անգամ այլ ևս չես նկատում դէմքիդ վրայ. . . Այդ բոլորն, և հարկ է, այդպէս էլ պետի լինի և ուրիշ կերպ կարող չէ լինել, որովհետեւ դրա համար ունիս առիթներ, որոնք բնականաբար քեզ պէտք է այդպէս փոխէին: Եւ ես չեմ ուզում ասել—և յիմարութիւն կը լինէր, եթէ ասելիքս այդ լինէր մի-

այն—թէ ինչո՞ւ առաջ այնպէս էիր, իսկ այժմ—այսպէս, ո՞չ, այլ ես ուզում եմ ասել և շեշտել, Աննա, որ այս վերջին ժամանակներս, ինչպէս որ ես այդ պարզ նկատում եմ, դու շատ ես մտածում . . .

—Ի՞նչ—մի տեսակ անորոշ երկիւղով մեքենայաբար հարցրի ես և աչքերս նորից վայր թողի:

—Այն,— արտասանեց նա իւրաքանչիւր բառն առանձին շեշտելով,—որին մարդիս խելքը ոչ հասել է և ոչ կը հասնի երբէք . . .

Ես ամբողջ մարմնովս ցնցուեցի. կարծես մի սարսուղիւն ռճիր լինէի կատարած և այդ ռճիրը յայտնի եղաւ: Նա, ինչպէս ինձ թուաց, նկատեց այդ, նստեց ուղիղ, թեքուեց դէպի ինձ և կամաց, կարծես զգուշութեամբ, առաւ ձեռքս:

—Անգլին քոյրիկս, — արտասանեց նա հանդիսաւոր շնչիւնով, որի մէջ լուռւմ էր և մի տեսակ պաղատանք,— թող կասկածը բնութեան արարչութեան և մարդկային կեանքը ղեկավարող օրէնքների մասին երբէք չմտտեայ մանուկ ուղեղիդ: Այնչ, կատարելապէս ոչինչ բաւարար եզրակացութեան չհասնելով, նա ծնում է լոկ յանցանք: Թող անմեղ սրտիդ մէջ հաւատը միշտ մաքուր, միշտ հաստատ մնայ, որպէս ջինջ լոյսը:—Հաւատը յոյս է, իսկ յոյսը—կեանք: Եւ գիտե՞ս արդեօք, թէ որքան երիտասարդ ես դու և այդ հասակումդ որքան անմեղ պէտք է լինի հոգիդ . . . Աղօթք անո՞ւմ ես—յանկարծ հարցրեց նա, գլուխն աւելի մտտեցնելով դէմքիս և ձայնը բորբոսիւն ցածրացնելով:

—Այ—ակամայ դուրս թռաւ բերանիցս:

Նա գլուխը տխուր և յանդիմանօրէն շարժեց և կարճ լուռութիւնից յետոյ սկսեց բացատրել ինձ, թէ ինչ է աղօթքը և ինչպիսի փրկարար գէնք է նա հոգեկան և բարոյական խաղաղութեան համար: Եւ այնպիսի համոզեցուցիչ եղանակով, այնպիսի հանգիստ պերճախօսութեամբ էր նա բացատրում, որ

ես՝ ազահութեամբ լսելով հանդերձ՝ մնացել էի բորբոսիւն գարմացած, թէ ինչպէս նրա տակաւին երկտասարդ ուղեղին մատչելի էին այդպիսի վերացական գաղափարները: Ինչ և իցէ: Բայց նա կարողացաւ ինձ համոզեցնել, և երէկուանից դէս ես զգում եմ, որ կարծես մի ծանր բեռ ընկել է վրայիցս:

Քո Աննա Սարոյեան:

ՆԱՄԱԿ ԺԱ

Թիֆլիս, փետրոսարի 10-ին 1881.

Սիրելի Հռիփսիմէ,

Դու էլ ես մեղադրում և յանդիմանում ինձ այն բանի համար, ինչ բանի համար որ մեղադրում և յանդիմանում էր Գրիգորը. նրա ասելով, ես շատ եմ մտածում: Սակայն դու նրանից աւելի խիտ ես դատաքննում իմ այդ վարմունքը, ասելով, որ ես ուղղակի չաթէխտութիւնս եմ անում, որ ես ոտնակոխ եմ անում ամբողջ մարդկութեան ամենասրբազան, անմերձեմալի հաւատաւիքն և այլտեղ բերում ես Գեօթէի նշանաւոր խօսքերը, թէ՛ չմտածող մարդու ամենամեծ երջանկութիւնն այն է, որ քննելին քննած ունենայ, իսկ անքննելիս խաղաղ հոգով պաշտէ:—Յրևակայում եմ, թէ ինչ կը լինէր դուրսութիւնս, եթէ ես ապրելիս լինէի միջին դարերում. անշուշտ Հուսի նման ինձ էլ խարոյկ կը բարձրացնէին: Քան լեցի, քան լեցի, սիրելի քոյրիկ: Լուռ ուղտ մի շինէք: Մի թէ գլխումս խելք է մնացել, որ արարքներիս համար ինքս ինձ հաշիւ տամ: Ինչո՞ւ չես մտնում դուրսութեանս մէջ և այնպէս

չես դատաքննում արարքներս: Ամբողջ բարոյական աշխարհս ճակատագրից ծանր հարուած է ստացել: Նա վիրաւորուած և կատաղած է, որպէս մի անդօր գագան, որին խաղաղ դրութեան ժամանակ սաստիկ անհանգստացրել են: Հիասթափութիւնս մեծ է. ես դէմ առ դէմ կանգնած եմ դառն իրականութեան առաջ, որի մասին կեանքիս մէջ երբէք գաղափար անգամ չեմ ունեցել: Եւտ վատ խաղ է խաղացել ինձ հետ ճակատագիրը: յանկարծակի և անպատրաստից նա շարտել է ինձ այդ դառն, այդ սոսկալի իրականութեան առաջ և ասում է՝ հաստատուն մնա՛ւ: Ա՛խ, թշուառականս ինչ եմ ստացել, որ ինչ տամ:

Մեր վիճակն օր օրի վրայ վատթարանում է: Մի երկու խօսքով նկարագրեմ քեզ մեր կենցաղավարութիւնը, մեր ապրուստը և դու ամեն բան կը հասկանաս: Եթէ դու այժմ մտնես մեր տուն, շրջես մեր սենեակներն և քեզ ասեն, թէ այստեղ Սարգեաններն են ապրում, դու ոչ աչքերիդ կուզես հաւատալ և ոչ ականջներիդ. այն բոլորն, ինչ որ կը տեսնես շատ ծիծաղելի—չեմ ասում դառն—կատակ կը թուայ քեդ:—Տան մուտք շինութիւնն և անյարմարութիւնները մի կողմը թողնելով (այդ մասին, կարծեմ, գրել եմ քեզ), մեր սենեակներն նախկին շուպլ, փռուաւոր գարդարանքների և կահաւորման հետքն անգամ չես կարող գտնել այժմ. դաշնամուրիցս, իմ սիրելի դաշնամուրիցս սկսած մինչև վերջին բազկաթուռը, մինչև լուսամտաի վերջին վարագոյրը—բոլորը վաճառեցին անուղղով: Խոհարարի, աղանձի և ծառաների մասին, ի հարկէ, աւելորդ է անգամ խօսել: չունինք զօնէ մի հատիկ ծառայ, որին փողոց ուղարկէինք: Ամեն բանի մէջ—ուտելում, խմելում, հագնելում սաստիկ խնայողութիւն ենք անում, անում ենք ճարահատեալ: Ել չեմ գրում, թէ այդ բոլորը որքան գգալի է մեզ համար, դու ինքդ էլ կարող ես երևակայել... Տանը գտնուած աւելորդ ոսկեղէն և արծաթեղէնն արդէն սկսել

ենք վաճառել: Առաւելապէս մեզ քանդում են բժիշկների վարձքն և դեղորայքը. զօնէ դրանից մի զգալի օգուտ լինէր հօրս կամ եղբորս: Ահա ամբողջ չորս ամիս է, ինչ այդ բժիշկները ջանասիրութեամբ յաճախում են մեր տուն և, չնայելով դրան, հօրս դրութիւնն այժմ էլ համարեա նոյնն է, ինչ որ առաջ, իսկ Գրիգորի առողջութիւնն, ընդհակառակն, օր օրի վրայ ետ ու ետ է գնում...

Հնա, բժիշկներ ասացի, միտս եկաւ: Անցեալ անգամները (այդ մասին, կարծեմ, քեզ չեմ գրել) հօրս բժիշկը—X-ը (դու պէտք է որ ճանաչում լինիս այդ պարոնին) դառնում է մեզ և ասում է ծածուկ, որ հօրս այլ ևս ոչինչ չի օգնիլ և ի գուր հնձ նա է չարչարում (ասա խեղճն ինչ է չարչարում), հնձ մենք. Եթէ ուզում էք, ասում է, այնպիսի դեղ կը տամ, որ վերջնականապէս կը որոշէ նրա վիճակը: Հասկանում ես, սիրելի քոյրիկ, թէ դրանով նա ինչ էր ուզում ասել. ուզում էր ասել—ձեր հօր կեանքն իմ ձեռքին է, ուզում էք, ես նրան կը սպանեմ... Չարմանքից, սարսափից և կատաղութիւնից չգտաի ինչ պատասխանեմ: Սառնասրտութիւնս կատարելապէս կորցնելով, ես սրատրաստ էի մի սաստիկ ապտակ տալ նրա գեր երեսին և կը տայի, եթէ նա, նայելով թէ բանն ինչու՞մն է, իսկոյն և եթ չհեռանար: Ես աղաղակեցի նրա ետևից, որ նրա ոտն այլ ևս չլինի մեր տանը: Նրբ նա գնաց, ես սաստիկ լաց եղայ, որովհետև որդիական ամենասուբբ, ամենաքնքոյզ զգացմունքներս անասելի կերպով վիրաւորուած էին: Հարագատ հօր աննպատակ սպանման գործի մէջ ուզում էին, որ հարագատ աղջկը խորհրդակից և մասնակից լինէր... Այդ մասին մտածելիս անգամ մագերս փշաքաղում են և ամեն անգամ սոսկում եմ, որպէս մի զարհուրելի ոճրագործ... Տէր Աստուած, միթէ բժիշկներն այդպէս հեշտ կարող են խաղալ իրենց հիւանդներին կեանքի հետ, միթէ առանց զարհուրանքի նրանք կարող են այդպիսի բաներ մտածել... Նրանք, որոնց ուղղակի կոչումն և

յօժարակամ պարտականութիւնն է հիւանդներին նոր կեանք տալու, ընդհակառակն, առաջարկում են ունեցած կեանքն էլ խլել, և այդ ինչու,—որովհետև իրենց գործից ոչինչ չեն հասկանում և, խոստովանուելով այդ բանը, չեն ուզում հրաժարուել բժշկելուց, որպէս զի չխայտառակուեն իրենք... Աւագակմարդասպաններն աւելի խիղճ ունին:

Միւս երկու եղբայրներս—Արշակն և Գարեգինը—բաւական չէ, որ անգործ են, այլ և մի ծանր բեռ են դարձել մեր վզին: Սրկուսն էլ ամբողջ օրն ընկած են տանն և ձրի ուտում են, խմում: Արշակին այլ ևս ոչ մի տեղ չեն պահում իւր արբեցողութեան համար, իսկ Գարեգինն ինքը չէ ուզում ոչ մի տեղ կանգնել: Չնայելով մեր յորդորներին, թախանձանքներին և յանդիմանութիւններին, ոչ Արշակն է ուզում ձեռք վերցնել իւր արբեցողութիւնից, ոչ Գարեգինն—իւր ծուլութիւնից: Ա՛խ, հայր, հայր, որքան տառապանքներ բերիւր մեր գլխին... Նւա առողջութեան ժամանակ ամենքս սիրում էինք նրան և վախենում նրանից: Թողնելով իւր զուարճախօսութիւններն ու կատակները, հարկաւոր դէպքում նա գետնի և լուրջ խօսել, լուրջ դատել, լուրջ խրատել: Մենք աշխատում էինք ոչինչ այնպիսի անդիւրեկան բան չանել, ոչ ևս համար նա յանդիմանէր մեզ: Իսկ այդպիսի դէպքերում նրա յանդիմանութիւնները շատ խիտ էին լինում: Կարող էինք Գրեգորը, ես կամ Գարեգինը գէթ մի օր, առանց մի որ և իցէ յարգելի պատճառի, ուսումնարանից ետ ընկնել, կարող էր Արշակը՝ նրա հետ միասին ճաշի նստած ժամանակ՝ մի բաժակ աւելի խմել: Իսկ անցիմ:—Այլ ևս չկայ հայր, յախտեան լռեցին նրա յանդիմանութիւնները, նրա խրատներն, այն, յախտեան, որովհետև այն, ինչ որ կար, էլ չէ լինելու, անցեալն էլ չէ դառնալու: Վայ նրան, ով տէր չունի:

Սրկու եղբայրներին անգործ մնալը՝ մեր այս թշուառութեան ժամանակ՝ սաստիկ մտատանջութիւն է պատճառում մանաւանդ Գրեգորին: Էլ ոչ մի յանդիմանութիւն, ոչ մի նա-

խատինք չէ մնում, որ չթափէ նրանց գլխին, բայց նրանք ուշադրութիւն չեն դարձնում ոչ նրա և ոչ ինձ ու մօրս վրայ, երբ մենք նոյնպէս սկսում ենք յանդիմանել, յորդորել, խնդրել, որ նրանք թողնեն իրենց պակասութիւններն և մի գործի կանգնեն:

Երկի ես մտայ Գրեգորի սենեակը: Նա այնտեղ չէր, բայց հարեւան սենեակից լսեցի նրա ձայնը. նա խօսում էր Արշակի և Գարեգինի հետ:

—... Միթէ գոնէ ամօթ, պատկառանք չունիք,—ասում էր նա:—Ախր մինչև երբ պէտք է այդպէս մտն գաք... Տեսնում էք, էլի, թէ հետզհետէ մեր վիճակն ինչ է դառնում. օր կը գայ, որ դուք այստեղ չոր հացի կտոր անգամ չէք գտնիլ, որ ուտէք: Գոնէ ձեզ համար, ձեր փորն համար աշխատեցէք... Եւ ի՞նչ յուսով էք այդպէս անում:

—Մի վախիլ, այս աշխարհիս երեսին ոչ ոք քաղցած չէ մեռնիլ,—լսեցի մեծ եղբորս ձայնը, որին հետևեց երկար յօրանջում:

—Եւ ոչ առանց ամօթի,—նկատեց Գրեգորը:—Եւ դու ընդունակ կը լինիս ծանօթներիդ, բարեկամներիդ, թէկուզ հենց բոլորովին անծանօթ մարդկանց պարզել ձեռքդ ողորմութիւն խնդրելու... հայ:

—Գէ, դու շատ պէտք է զահլա տանես,—բարկացած գուռաց Արշակը:—Եթէ սիրտդ շատ է այրում ծնողներիդ և բրոջդ համար, կարող ես ինքդ աշխատել:

Գեռ կարճ ժամանակ լռութիւն տիրեց, յետոյ լսուեց Գրեգորի չոր հազը:

—Գու այնքան չես մտածում, որ եթէ ես—չեմ ասում բեզ պէս,—փոքր ինչ առողջ լինէի, բանն երբէք այն տեղը չէի հասցնիլ, որ իմ այդ պարտականութիւնը դու ինձ յիշեցնէիր,—հանդարտ ձայնով պատասխանեց նա, երբ հազը կարեց: Բայց դժբաղդաբար, այն, դժբաղդաբար ես ստիպուած եմ լսելու

բեզնից այդպիսի խօսքեր, որքան էլ այդ ծանր լինի ինձ համար: Մտի սոյն առ ձեզ չս մ այդ չս նորմալայ բն ինչի տղայ

—Թող քոյդ աշխատի...
—Եւ դու ուտես,—աղաղակից իսկոյն Գրիգորը մի աչնպիսի եղանակով, որից երևում էր, որ նա երբէք չէր սպասում, թէ Արշակից մի այդպիսի բան կարող է լսել:

Կարճ լուռութիւնից յետոյ ես լսեցի, թէ ինչպէս նա սաստիկ գայրացած մօտեցաւ դրան շէմքին: Նա ներս մտաւ և դուռըն ամուր շրտկացնելով, վիակից իւր ետևեց: Ես արձանացաւ կանգնած էի սենեակի մէջ տեղում և չգիտէի, թէ ինչ էր կատարում իմ մէջ: Կայքանս միայն գիտէի, որ մեծ եղբորս արտասանած վերջին խօսքերը—«Թող քոյդ աշխատի»—ինձ վերայ սաստիկ ազդել էին...

—Ա՛նձա, —գարմացած և փոքր ինչ վախեցած արտասանեց նա, յանկարծ անսնելով ինձ:

Երևում էր, որ նա չէր սպասում, թէ ես այնտեղ կը լինիս: Ես չկարողացայ ձայն հանել և ոչ շարժուել տեղիցս:

Նա կամաց մօտեցաւ ինձ, կամաց առաւ ձեռքերս և սաստիկ կարեկցութեամբ, սաստիկ քնքշութեամբ նայելով աչքերիս, արտասանեց դողդոջուն ձայնով.

—Սիրելի քոյրեկա, տեսնում ես, տեսնում ես որքան անգուժ են նրանք...

—Ի՛նչ, ես կաշխատեմ,—սառնութեամբ պատասխանեցի ես:

Նրա դէմքի վրայ երևաց սաստիկ տանջանք:

—Ա՛նձա, սիրելիս, շնչաց նա և նրա ձայնը, կարծես հանգաւ: Նրա աչքերը լցուեցին արտասուքի փայլուն կաթիլներով. նա կուացաւ և սիսեց համբուրել ձեռքերս: Ես համարեա ոչինչ չէի գգում և շարունակ կանգնած էի նոյն դուռութեան մէջ:

Յանկարծ նա թողեց ձեռքս և գնաց դէպի իւր մահճակալը: — Կարճ չէ սխալաւ գազաչքոյդ եր մ տեսնել տղայ

—Ա՛խ, ինչո՞ւ ես հիւանդ եմ,—աղաղակից նա և ընկնելով իւր անկողնի վրայ, դէմքը թաղեց բարձի մէջ:

Այն աստիճան աղեկաւոր էր նրա ձայնը, որ ես յանկարծ ցնցուեցի և սիրտս կարծես սաստիկ, սաստիկ ճմլեցնելու ես իսկոյն շտապեցի դէպի նա: Նա սաստիկ, ցնցողաբար հեկեկում էր և ցնցուելուց նրա ողջ մարմինը վեր ու վեր էր թռչում: Առաջին անգամն էր, որ տեսնում էի նրան այդպէս յուսահատուած և լաց լինելիս: Իսկ առաջ նրա դէմքի վրայ ես երբէք չէի տեսել յուսահատութեան ո՛չ մի գիծ, աչքերի մէջ—արտասուքի ո՛չ մի կաթիլ. նա միշտ խրախուսում էր մեզ, որպէս անվեհեր հրամանատարն իւր թոյլ դօրքերին պատերազմի դաշտի վրայ, յանդիմանում էր, երբ տեսնում էր, որ մենք այնպէս շուտ ընկնում ենք հողով, և ամեն անգամ կարողանում էր մեզ վրայ մեղրործութիւն ունենալ: Իսկ այժմ, այժմ:—Նրա աղաղակն ու հեկեկանքն ամեն բանից էլ լաւ էր բացատրում, թէ որպէս փրշուած էր նրա ուժեղ կամքն արտաքին ծանր հանգամանքներից... «Ա՛խ, ինչո՞ւ ես հիւանդ եմ», աղաղակում է նա այն ժամանակ, երբ ես նրան ասում եմ, թէ պատրաստ եմ աշխատելու: Այդ խօսքերն ես կեանքիս մէջ երբէք չեմ մոռանալ. դրանք արտասանուած էին այնքան տանջանքով և այնքան անկեղծ սրտով, որքան որ դրանք բացատրում էին, թէ որքան անկեղծ և անհուն էր նրա եղբայրական սէրը դէպի ինձ...

Ես ամեն կերպ աշխատեցի հանգստացնել նրան, բայց նա այն աստիճան յուզուել էր, որ այլ ևս չկարողացաւ խօսել ինձ հետ: Ես աւելի լաւ համարեցի նրան մենակ թողնելու և դուրս եկալ շատ ծանր արամաղուութեամբ... «Թող քոյդ աշխատի»: Խօսքերը մտքիցս բնաւ չէին հեռանում... Բայց ամենից աւելի ինձ մտատանջում էր այն հանգամանքը, որ Իրիգո-

րի յուզմունքը հեշտ չէր կարող անցնել նրա առողջութեան վերաբերութեամբ: Եւ, դժբաղդաբար, այդպէս էլ եղաւ.—այսօր նրա դրութիւնը շատ վատ է:

Ի՛նչպիսիք քեզ ունեցած սաստիկ կարօտս է, սիրելի Հռիփսիմէ, որ ես այսքան երկար նամակներ եմ գրում քեզ.—այդ միևնոյն է, թէ խօսում եմ քեզ հետ: Սիրտս սաստիկ լցուած է: Վշտերս ուզում եմ բաժանել մէկի հետ և բացի քեզնից էլ ո՞վ ունիմ... Ա՛յն, եթէ դու այժմ մօտս լինէիր, միակ կարեկիցս, էնչպէս ջերմագին կը սեղմէի քեզ վշտահար կրծքիս...

Քո Աննա Սարոյեան:

ՆԱՄԱԿ ԺԲ.

Անգին քոյրիկ,

Նղբայրս—Գրեգորը մեռաւ... Արաստուքը խեղդում է ինձ. էլ ոյժ չունիմ գրելու...

ՆԱՄԱԿ ԺԳ.

Թիֆլիս, ապրիլի 30-ին 1881.

Սիրելի Հռիփսիմէ,

Ստացայ անկեղծ ցաւակցութեանդ նամակը: Անչափ շնորհակալ եմ և՛ խրախուսանքիդ համար: Առաւել քան այժմ ես կարօտ եմ այդպիսի խրախուսանքների, որովհետև զգում եմ, թէ էնչպէս վերջին հարուածը հիմն ի վեր տապալել է ամբողջ բարոյական աշխարհս: Ես ընկած եմ, որպէս մի մարդ, որ ան-

թիւ ծանր վէրքեր ստանալուց յետոյ, ստանում է և՛ վերջին ամենասարսափելի վէրքն ուղիղ կրծքին: Սակայն, ես չեմ տըրտնջում: Փնփռեմ և գոհութիւն նրան, ով տնօրէնում է մարդկային բաղդը: Նրբ տեսնում ես, երբ զգում ես, որ տկար եմ ուժերդ, պէտք է հպատակեմ տիրապետող բարձր, անհիմանալի օրէնքներին, որոնց սահմանել է Ինքը—Նախախնամողը: Եւ ես հպատակում եմ: Մինչև այժմ ես յուսահատ պատերազմ էի մղում: Մորթութեան անդունդն արդէն բաց էր արել իմ առաջ իւր պհարիւր բերանը և ես քիչ էր մնում, որ կուրօրէն ընկնէի նրա մէջ: Բայց ինչ շահեցայ դրանից.—այն, որ տանջանքներս կրկնապատկուեցան, այն, որ մեղք գործեցի և ի վերջոյ ընկայ յաղթուած: Այո, ես այժմ ընկած եմ. հպարտ գլուխս այլ ևս չէ յանդգնում վերև նայել.—նա խոնարհած է և միշտ խոնարհ կը մնայ: Թող այսուհետև ինչ կուզէ լինի,—ես հաշտուել եմ ամեն բանի հետ: Եւ դու չես կարող երեւակայել, սիրելի Հռիփսիմէ, թէ որքան հանգիստ եմ այժմ: Եթէ կուրծքս ճղեն և հանեն սիրտս, նրան սառած կը գտնեն: Կարծես, ես այլ ևս չեմ ապրում:—Եւ այդ պատճառով, առանց գէթ փոքր ինչ յուզուելու, ես այժմ համարձակ կարող եմ նկարագրել քեզ եղբօրս վերջին դրութիւնն ու մահն իրենց բոլոր մանրամասնութիւններով: Եւ պէտք է նկարագրեմ: Թող քո աչքերիցդ էլ փոքր ինչ արտասուք թափուի.—նա արժանի է դրան:

Նա մեռաւ սրանից ուղիղ երկու շաբաթ առաջ, սոյն ամսի 16-ին, երեկոյեան մօտ 5 ժամին: Այդ նշանաւոր օրն ես շատ լաւ լիշում եմ: Գարունն այստեղ շատ վաղ եկած լինելով, եղանակը հիանալի էր և այնքան տաք, որ մինչև անգամ լուսամուտները բաց էինք արել: Մեր տեղափոխուելուց յետոյ, առաջին անգամն էր, որ մենք այս տանը պարզ օդ էինք ծծում: Գրեգորը պառկած էր լուսամուտի առաջ. երկու օր առաջ նա խնդրել էր, որ իւր մահճակալն այդ տեղ տեղափոխենք: Վերջին անգամ նա ուզում էր տեսնել գարնան պայծառ

արևը, նախէ կապոյտ երկնքին և տեսնել, թէ ինչպէս ուրախ
 ծիծեռնակները գայլս, նստում են բակում կապած թռիկ վրայ,
 օրօրուելով ճրճուում են և նորից թռչում են դնում: Այդ հին-
 գերորդ օրն էր, որ նա այլ ևս չէր կարողանում վեր կենալ
 անկողնից: Մենք բոլորովին չէինք կարծում, թէ այդ օրը
 նա կը մեռնէր, որովհետև մեռնելուց մի քանի ժամ ա-
 ռաջ նրա դուրթուներ նոյնն էր, ինչ որ մի քանի օր առաջ,
 մինչև անգամ լաւ էր: Բայց երևի ինքն այդ իմանում էր,
 որովհետև նոյն օրն առաւօտեան յատուկ խնդրեց ինձ, որ
 չհեռանամ իւր մօտից: Այդ օրը նա սովորականից աւելի քն-
 քոյշ էր թէ դէպի ինձ և թէ դէպի մայրս, որի մի ոտը հօրս
 սենեակումն էր, միւսը նրա մօտ: Այդ օրը նա սովորականից
 շատ էլ էր խօսում ինձ հետ: Իսկ երբեմն մերթ ուրախ էր
 լինում, մերթ յանկարծ տխրում էր և մտածութեան մէջ էր
 ընկնում: Մի անգամ էլ, ուրախ խօսելուց յետոյ, յանկարծ
 լռեց, գլուխը դարձրեց դէպի լուսամուտը և, դուրս նայելով,
 ընկղմեցաւ մտածմունքների մէջ: Նա չուզեցի խանգարել նրան
 և, փոքր ինչ կռանալով դէպի նա, սկսեցի նայել նրա դէմքին:
 Աստուած իմ, սրբան փոխուած էր այդ դէմքը, իմ ճանաչած
 սիրուն, կանացի դէմքը.—նիհար, չոր, դուժատ, կարծես, մի
 կաթիլ արիւն անգամ չկար նրա երակներէ մէջ: Փոքրիկ, կա-
 նոնաւոր քիթը, որ միշտ ներդաշնակ գեղեցկութիւն է սուել
 նրա դէմքին, կարծես, սաստիկ մեծացած դուրս էր ցցուել
 իւր սեղմուած պնչերով: Աչքերը խոր էին ընկել և մեծացել,
 իսկ պարզ, լայն ճակատը, կարծես, աւելի լայնացել էր: Չգիտեմ
 ինչ էր պատճառը, բայց ինձ թուում էր, թէ առաջին անգամն
 եմ տեսնում, որ նա այդքան փոխուել է: Երկար ժամանակ
 նա անշարժ կար նոյն դրութեան մէջ: Մի ինչ-որ անորոշ
 զգացմունք, կարծես, չէր թողնում ինձ, որ խանգարեմ նրա մտած-
 մունքները. իսկ ինձ թուում էր, թէ այդ մտածմունքները թանգ
 արժեքն նրա համար: Սո լուռ և խորին վշտով նայում էի նրա

դէմքին, երբ յանկարծ նրա շրթունքները բացուեցին և նա
 կամաց, շատ կամաց, կարծես ինքն իրեն, շնչաց...
 —Ինչքան սիրուն բան է գարունը... ակամայ սիրում ես
 կեանքն, ինչքան էլ որ նա լի լինէր ձախորդութիւններով...
 ակամայ ուզում ես ասլուել, սիրել և...
 —Նա չուեց և դէմքը կամաց դէպի ինձ դարձրեց:
 —Ուղիղ ասա, քոյրիկ,—ասաց նա տխուր և աղերսող
 ձայնով,—առաջուայ նման դու դարձնալ մտածում ես...
 —Ո՛չ, Գրեգոր, ես աղօթում եմ,—պատասխանեցի ես
 ջերմեռանդ զգացմունքով: —
 —Ես տեսայ, թէ ինչպէս նրա դէմքը պայծառացաւ: Նա
 առաւ ձեռքը և սեղմեց: —
 —Աղօթիր, սիրելի քոյրիկ,—աւրասանեց նա, կարծես,
 ոյժ առաջած: —Աղօթքը, միայն աղօթքը կարող է փրկել քեզ
 կեանքից ծանր ըտէներում... Հաւատացիր ինձ, որ դու երբէք
 չես գղջալ, եթէ երբէք չմոռանաս իմ այս անկեղծ խորհուրդը:
 ձյմարտ է, թէ կեանքի ձախորդութիւններն երբեմն շատ
 մոլորութիւնների պատճառ են դառնում, բայց մարդս այդպիսի
 դէպքերում միշտ աչքի առաջ պիտի ունենայ, թէ ո՞վ և ինչ
 է ինքը, երբէք չպիտի մեռցնէ իւր մէջ հաւատը, յօյրը, եր-
 բէք չպիտի մոռանայ աղօթել, կարծելով, թէ այդպիսով ինքը
 վրէժխնդիր է լինում: —այդ չափից դուրս անմտութիւն կը
 լինէր մարդու կողմից... Հաւատացիր ինձ, որ ձախորդութիւն-
 ներն ու թշուառութիւնն էլ ունին հոգեկան իրենց վսեմ
 քաղցրութիւնն, ինչպէս ազդութիւնն ու երջանկութիւնը.
 միայն թէ մարդ բնաւ չկորցնէր իւր հաւատը, յօյրը, բնու
 չմոռանար աղօթել... Այդ սովորեցրել է ինձ ինքը կեանքը և
 դու, առանց կասկածելու, հաւատա ինձ:
 Նա լուսւմ էի նրան խորին երկիւղածութեամբ, լուսւմ էի ոչ
 թէ իրբւ մի քսան և ջորս տարեկան անփորձ երեսասարդի,
 այլ որպէս մի պատկառելի, փորձութեան բովից անցած ծերու-

Նու, մի երկնառաք մարգարէի, որ տարածում է Աստուծոյ խօսքը... Բայց յանկարծ նրան լսելիս՝ մի ինչ-որ անորոշ երկիւղ պաշարեց ինձ. «Այս ինչպէս է խօսում նա այսօր», այդ հարցն ակամայ ծագեց գլխումս: Իսկ նա խօսում էր մի ուրիշ տեսակ, ոչ այնպէս, ինչպէս ամեն անգամ խօսում էր այդպիսի բաների մասին. նրա ձայնը հնչում էր տխուր, բայց մի ինչ-որ վեհ, սրբազան ոգևորութեամբ: Նա նայում էլ էր ուրիշ տեսակ. նրա հայեացքը վառւում էր. դրանով, կարծես, ուզում էր զօրացնել իւր խօսքերի ազդեցութիւնը...

— Գրեգոր, ինչո՞ւ դու այսօր այդպէս ես խօսում,— չկարողանալով դիմանալ, կարճ լուռութիւնից յետոյ, հարցրի ես:

— Ինչո՞ւ,— արտասանեց նա քնքրօրէն, նայեց աչքերիս և մի տեսակ օտարոտի կերպով ժպտաց:— Որովհետև ես պէտք է... մեռնեմ,— աւելացրեց նա հանդարտ ձայնով, բայց վերջին բառն արտասանեց այնքան կամայ, որ ես հազիւ լսեցի:

Զգիտեմ այդ ըոպէին ինձ ի՞նչ պատահեց, միայն ես խկոյն ամուր դրկեցի նրան. կարծեցի, թէ՛ նոյն ըոպէին նա յաւիտեան պիտի անհետանար աչքիս առաջից:

— Գրեգոր, ի հարկ է, դու կատակ ես անում, — շնչացի ես, ինքս իմ ձայնից վախենալով:

Նա դարձեալ նայեց աչքերիս և ես տեսայ, թէ ինչպէս ժպտալոր յանկարծ անհետացաւ նրա դէմքից և դա ընդունեց տրտուր, վշտալից արտայայտութիւն: Նա ոչինչ չպատասխանեց, միայն երկար նայեց աչքերիս և դէմքը շրջեց դէպի լուսամուտը: Նա համարեա սարսափով նայում էի նրան. հոմ ուզում էի փախչել նրանից, հոմ նրան դրկեցս բաց չթողնել...

Զգիտեմ սրբան ժամանակ այդպէս անցաւ, երբ նա, շարունակ դուրս նայելով, առաջուայ նման, բայց այս անգամ շատ տխուր ձայնով դարձեալ շնչաց.

— Յիշում ես, քոյրիկ,— այն ժամանակ մենք դեռ շատ փոքր էինք. ես տասն տարեկան էի, դու՝ եօթը,— գնացել էինք

տետրակներ առնելու և ես էինք գալիս: ձանապարհին մեզ մի կատարած եզր պատահեց: Ամենքն երկիւղեց մի կողմն էին քաշում և շտապում էին թաքնուիլ առաջին պատահած տեղը, Մենք շատ վատ տեղովն էինք անցնում. այնտեղ ոչ խանութ կար, ոչ բակ, որտեղ մենք էլ կարող լինէինք թաքնուիլ: Ճարահատեալ կանգնեցինք այնտեղ գտնուած մի տան պատի տակ: Եզր մօտենում էր: Գունաթափ և սաստիկ երկիւղով դու ամուր սեղմուեցիր ինձ. ես կանգնեցի առաջը, որպէս զի եզանը դիմադրեմ. և պաշտպանեմ քեզ նրա հարուածից: Արիւն կտրած աչքերով եզն ուղղակի մեզ վրայ եկաւ և կանգնեց մեր առաջ: Նս սարսափից ոչ կարողացայ աղաղակել և ոչ շարժուիլ, միայն բնազդմամբ իմ կողմից սեղմուեցի և ետևիցս երկու ձեռքով ամուր բռնեցի քեզ: Եզր կանգնեց, կանգնեց, նայեց, նայեց մեզ, յանկարծ փոնչացրեց, շուռ եկաւ և, պոչը տատանելով, վագեց միևնոյն ուղղութեամբ: Մենք ազատուեցինք: Նս նայեցի քո դէմքին և, կարծես, այժմ էլ տեսնում եմ այդ դէմքը. սաստիկ գունաթափ, սարսափից չուած, անմիտ աչքերով, դու ամբողջ մարմնով դողում էիր և՛ առանց թողնելու ինձ՝ շարունակ նայում էիր եզան ետևից. կարծես նա դարձեալ շուռ պիտի գար մեր կողմը և առաջուայ նման պիտի մօտենար մեզ այս անգամ սպանելու դիտաւորութեամբ: Բայց եզր շուռ եկաւ մի ուրիշ փողոց և չբացաւ մեր աչքերից: Նս տեսայ, թէ ինչպէս դու ազատ շունչ քաշեցիր, լուռ նայեցիր ինձ, մի տեսակ ձիւղ դու ազատ շունչ քաշեցիր, լուռ նայեցիր ինձ, մի տեսակ օտարոտի, բայց շատ անշնորհ կերպով ժպտացիր կամ, աւելի ձիւղ է ասել, ծամածռեցիր դէմքը և յանկարծ լաց եղար: Թէ՛ և, ի հարկէ, ես չբոկեցի քեզ եզան հարուածից, բայց այդ ըոպէին ես պատրաստ էի գոհ գնալու եզանը, միայն թէ քեզ ազատած լինէի, չնայելով որ սարսափն ինձ էլ էր կաշկանդել: Այնուհետև ինչպիսի հպարտութեամբ և հրճուանքով ես յիշում էի այդ անցքը. մտքումս մի անգամից տպաւորուել էր, որ քեզ ազատողը միայն ես էի...

Նա լուեց և մնաց անշարժ, անթարթ դէպի դուրս
 Նայելով: Երևում էր, որ մանկութեան այդ լիզողութիւնն այդ
 ըստէին էլ շատ քաղցր էր նրա համար, և նա չէր ուզում հե-
 առնել նրան իւր գլխին: Սո էլ չէի ուզում, չէի համարձակ-
 ւում խանդարել նրա այդ քաղցր լիզողութիւնը: Իրաւ, ինչ
 սքանչելի ժամանակներ էին այդ...

Մանկութեան օրեր, երազի նման: Ետեւորումս որի վրայ
 Արցաք, գոսցիք, այլ չէք դառնալու...
 շնչաց նա, կամաց հոգոց հանեց և նայեց ինձ...

— Գրեգոր, ինչո՞ւ դու չիշեցիր ինձ այդ անցքը—հարց-
 րել ես:

— Ինչո՞ւ,—արտասանեց նա յուսահատ ձայնով,—նրա հա-
 մար, որ ես այժմ այլ ևս ոչ մի բանից չեմ կարող քեզ ազա-
 տել...

Ձգացի, թէ ինչպէս սիրոս, սաստիկ ցաւ տալով, թրթռաց,
 գլուխս ակամայ խոնարհուեց նրա կրծքի վրայ և դառն,
 յուսահատութեան հեկեկանքը սկսեց խեղդել ինձ: Այդ ըո-
 սէից արդէն ես աներկբայ գգում էի, թէ ինչպէս մի աներկոյթ
 զօրութիւն սիրում էր կամաց-կամաց յաւիտեան բաժանել նը-
 րան ինձնից...

ձաշին, բացի կէս բաժակ կաթից, նա ոչինչ չառաւ բե-
 րանը: Սո նկատում էի, թէ ինչպէս կամաց-կամաց թուլանում
 էր նա, բայց ուշքը մինչև վերջին շունչը վրան էր: Մեռնելուց
 մի ժամ առաջ նա ուզեց տեսնել հօրը: Մայրս, որ, ըստ երե-
 ւութիւն, արդէն սկսել էր հասկանալ, թէ բանն ինչու՞ն է, կա-
 տարեց նրա խեղերբը: Ետևով հօրս թուից բռնած՝ գգուող-
 ութեամբ ներս բերեց և նստեցրեց հիւանդի մահճակալի առաջ՝
 աթոռի վրայ: Հայր և որդի նայեցին միմեանց, հօրս հայեաց-
 քը նոյն անմիտ, նոյն անզգաց հայեացքն էր, սակայն այս ան-
 գամ նրա մէջ նկատում էր փոքր ինչ հետաքրքրութիւն, խի
 եղբօրս հայեացքը... Ինչքան սէր, կարեկցութիւն, վիշտ և յու-

սահատութիւն կար այդ հայեացքի մէջ, հօրը յաւիտեան մնա-
 ցիւր բարև ապօղ այդ լուս, վերջին հայեացքի մէջ... Նա առաւ
 հօր ձեռքը, ուզեց բան ասել, բայց ոչինչ ձայն դուրս չեկաւ
 բերանից: Նա միայն խոնարհուեց և շրթունքը կայրեց նրա
 ձեռքին:

— Այս ո՞վ է,—կամաց հարցրեց հայրս, նայելով մօրս:

— Գրեգորն է... Ձե՞ս ճանաչում,—հազիւ կարողացաւ ար-
 տասանել խեղճ մայրս, որովհետև արտասուքը խեղդում էր նը-
 րան:

— Ոչ, չեմ ճանաչում,—պատասխանեց հայրս և, փոքր ինչ
 լսելուց յետոյ, հարցրեց.— Հիւանդ է:

— Այդ ո՞վ,—յուրի գոյ ունէ այս քիչոպոյս: Մոմ ում քա...

— Ես էլ եմ հիւանդ, խեղճ տղայ, ես էլ եմ հիւանդ—ար-
 տասանեց հայրս, կարծես, սաստիկ կարեկցութեամբ և, ձեռ-
 քը հեռացնելով Գրեգորի շրթունքից, սկսեց շփել նրա գը-
 լուխը:

Սո այլ ևս չկարողացայ դիմանալ—սիրտս պատառւում էր
 — և շուտով դուրս գնացի, որպէս զի այլ ևս ոչինչ չտեսնեմ,
 ոչինչ չլսեմ...

Ներք, քառօրի ժամից յետոյ, դարձեալ ներս մտայ, մայրս
 հօրս արդէն դուրս էր տարել: Գրեգորը պառկած էր երեսն ի
 վեր և ձեռքով ծածկած ունէր իւր դէմքը: Երբ ես մօտեցայ
 նրան, նա ձեռքը հեռացրեց դէմքից: Ինչքան վիշտ տեսայ
 այդ դէմքի վրայ... Նա աղերսող հայեացքով նայեց ինձ և
 առաւ ձեռքս:

— Ա՛նձա, —արտասանեց նա դողողուն ձայնով,— դու
 գիտես, թէ ինչպէս կը նայես հայրեկին և մայրեկին: Բացի քեզ-
 նից, նրանք ուրե՛ղ ոչ ոք չունին, օգնէ՛ր նրանց, ինչպէս կարող
 ես...

Նա սեղմեց ձեռքս, թողեց և ինձնից ոչինչ պատասխան
 չպահանջեց. չպահանջեց արդեօք նրա համար, որ հասկանում

էր, թէ նորպէսի ծանր պարտականութիւն էր դնում ինձ վրայ, թէ նրա համար, որ յոյս ունէր ինձնից, — չգիտեմ, միայն այդ մասին նա այլ ևս ոչինչ չխօսեց:

Նրա մահին ներկայ էինք միայն ես, մայրս և թոմաս Գասպարիչը, որը հենց նոր էր եկել և որն, իմանալով, թէ բանն ինչումն է, սաստիկ տխուր նստած էր մի կողմը: (Նիդաչըներս՝ եղանակը լաւ լինելուն պատճառով՝ այդ օրը դուրս էին գնացել և դեռ տուն չէին եկել. ո՞վ գիտէ որտեղ էին թափառում): Նա խնդրեց, որ քահանայ կանչենք: Թոմաս Գասպարիչը դնաց քահանայի ետեկից: Քահանան եկաւ: Ի՞նչպիսի սրբազան ջերմեռանդութեամբ ընդունեց նա հաղորդութիւնը... Մեռնելուց առաջ նա նախ համբուրեց մօրս ձեռքը, յետոյ — իմը, իսկ ամենից վերջը — թոմաս Գասպարիչինը, որն, այլ ևս չկարողաճալով դիմանալ, սկսեց երեխայի նման լաց լինել: Այնուհետեւ վերջին հայեացքը — վշտալից, աղերսող հայեացքը ձգեց ինձ վրայ և համարեա նոյն ըոպէին էլ հոգին աւանդեց... ո՞չ, հոգին չաւանդեց, — հոգին աւանդելիս, ասում եմ, մարդ շատ սարսափելի է լինում. բայց այդպիսի բան ես բոլորովին չնկատեցի նրա մէջ, — այլ նա աչքերը փակեց և քնեց, քնեց, որպէս զի այլ ևս երբէք չաբթնանայ... Երբ նա աչքերը փակեց, ես բոլորովին չէի կարծում, թէ մեռաւ, բայց մայրս այդ իսկոյն և եթ հասկացաւ: Նա նախ մի տեսակ բուժ՝ անմիտ հայեացքով մեքենայաբար նայեց ինձ, յետոյ թոյլ, շատ թոյլ ձայնով, կարծես ուժասպառ, ճչաց և գլուխը դնելով մեռած որդու գլխի մօտ՝ բարձի վրայ, մի ձեռքով գրկեց նրա կուրծքը: Սաստիկ դողը ցնցեց ողջ մարմինս. ես հասկացայ, որ եղբայրս մեռաւ: Աչքերս մթնեցին, ծնկներս սաստիկ թուլացան և այնուհետեւ ես այլ ևս ոչինչ չգգացի: Երբ ուշքի եկայ, տեսայ, որ պառկած եմ սենեակում՝ անկողնիս վրայ, մայրս նստած է կողքիս՝ սառը, գունատ, չոր դէմքով, իսկ թոմաս Գասպարիչը — դիմացը՝ աթոռի վրայ վշտից սառած և կուչ եկած: Սկզբում ես կար-

ծում էի, թէ առաւօտ է և նոր եմ վեր կենում, բայց երբ նայեցի մօրս, նայեցի թոմաս Գասպարիչին, նայեցի շուրջս, դարձեալ մօրս, դարձեալ թոմաս Գասպարիչին, — արդէն եղելութիւնը պարզուեց ինձ համար: Եւ մինչև հիմայ էլ զարմանում եմ, թէ այդ ժամանակ ինչպէս կարողացայ այնքան հանգիստ լինել. — ո՞չ մի հառաչանք, արտասուքի ո՞չ մի կաթիլ, ոչինչ դառնութիւն, ոչինչ վիրտ. կարծես ես մեռած էի և զգում էի, որ մեռած եմ: Ասում էին կեր՝ ուտում էի, խմել՝ խմում էի, որ մեռած էի: Ասում էին այն ինչը՝ բերում էի, տնք այս ինչը՝ հագելը՝ հագնում էի, բեր այն ինչը՝ գնում էի, մի խօսքով՝ անում էի, արե՛ գալիս էի, գնա՛ գնում էի, ոչ հասկանում էի, ոչ զգում: Եւ եթէ այժմ հարցնես ինձ, թէ ինչպէս թաղեցինք եղբորս, ո՞վ կար յուզարկաւորութեանն և այլն, — ես ոչինչ չեմ կարող պատասխանել: Այսքանը միայն մոռ իրերսով, երազի նման յիշում եմ, որ ինձ սևեր հագցրին, ձեռքս մի սպիտակ թաշկինակ դրին, թէ և թաշկինակի ես կարևորութիւն չունէի, ձեռքիցս բռնեցին, տարան եկեղեցի և դարձեալ ետ բերին: Այս էլ յիշում եմ, որ եկեղեցում համբուրեցի նրա ճակատը, դարձեալ համբուրեցի, դարձեալ... էլ ոչինչ չեմ յիշում: Իսկ այժմ, երբ այդ ժամանակից անցել է ամբողջ երկու շաբաթ, երբ ամեն օր մտնում եմ նրա սենեակին և ամբողջ ժամերով ձեռքերս խաչած՝ նրատունում եմ նրա դատարկ մահճակալի վրայ, — ի՞նչ եմ զգում ես... Փառք և գոհութիւն Նրան, ով տեսրկնում է մարդկային բաղդը: «Աղօթքը, միայն աղօթքը կարող է վրիկել քեզ կեանքիդ ծանր ըոպէներում», ասաց նա: Օրհնեալ լինի քո յիշատակն, իմ սիրելի, իմ անգլին եղբայր:

Աճնա Սարգիսեան:

ՆԱՄԱԿ ԺԴ.

Թիֆլիս, յուլիսի 25-րդ 1881.

Սիրելի Հովհաննէ,

Նամակ ես պահանջում. ի՞նչ գրեմ, ի՞նչ ունիմ գրելու, ի՞նչ կարող եմ գրել, երբ շուրջս և ներսս կատարեալ դատարկութիւն է արեւմ. Ոչինչ չկայ, ոչինչ մի հիմնաւոր բան, որից կարողանայի ամուր կապել՝ չանհետանալու համար, որի վրայ կարողանայի վերջնականապէս կեդրոնացնել թափառող մտքիս ընթացքը՝ չմոլորուելու համար: Երեւակայիք մի անհուն, անտակ խորխորատ անվերջ ատրածութան մէջ, որտեղ ընկել է մի մարդ. նա տարածում է ձեռքերն այս ու այն կողմը, որպէս զի մի բան գտնէ, որից կարողանայ կապել՝ աւելի խորը չընկնելու համար, բայց միշտ պատահում է դատարկ տարածութեան, և նա շարունակ ընկնում է ցած, ընկնում է անվերջ, մինչև անգամ սոսնձի տակ յատակ չգտնելով. — Ես այդ դրութեան մէջ եմ: Ճշմարիտ է, կայ իմ մէջ մի գագաթունք, որի համար պարտական եմ մեռած եղբորս, և թէև այդ գագաթունքը շատ անգամ բարերար ներգործութիւն է ունեցել տանջուած հոգուս վրայ, բայց... անգլին քոյրիկ, դու հասկանո՞ւմ ես, թէ որքան երկատարդ եմ ես դեռ և թէ սիրտս, հոգիս քնականաբար դէպի ինչը պիտի ձգտեն: Ես... Ա՛խ, բաւական է թողնենք այս, այդ և օ սիրտ չկայ:

Եղբորս մահն, ի հարկէ, անհետեւանք չէր կարող անցնել ոչ ինձ և ոչ մօրս համար՝ մանաւանդ մեր այս թշուառութեան փամփանակ: Մայրս անմեղապէս ընկաւ անկողին և մօտ մի ամիս շարունակ պառկած էր: Նրա և հօրս միակ խնամատարն ես էի, թէև ես էլ պակաս հիւանդ չէի գգում ինձ: Նրա անկողնից վեր կենալն և իմ պառկելը մէկ եղաւ. կարծես դիտմամբ

միմեանց խօսք կիճք տուել այդպէս անելու: Ես նրանից աւելի կարճ ժամանակ էի պառկած և ահա մի շաբաթ է, ինչ վեր եմ կացել: Այժմ ինձ սաստիկ թոյլ եմ գգում. երկար չեմ կարողանում ման գալ կամ մի որ և իցէ բան շինել, խկոյն յոգնում եմ, ուզում եմ նստել կամ թէկէն տալ: Գրկչն էլ այժմ դժուարութեամբ եմ շարժում ձեռքիս: Անցեալ օրը նայեցի հայելում և ինքս ինձնից սարսափեցի: Ակամայ վերցրի անցեալ տարուայ լուսանկարս և համեմատեցի. — ինչքան փոփոխութիւն... մինչև անգամ ինքս էլ չէի ուզում հաւատալ, թէ ես այդքան փոխուել եմ: Վամ այս իմ լուսանկարս չէ կամ թէ չէ՝ հայելին է ինձ խաբում, ասում էլ ինքս ինձ: Լուսանկարն մէջ հանուած է մի գեղեցիկ, մի կայտառ օրիորդ, որի աչքերն երջանկութեամբ և չարաձձի կերպով ժպտում են, իսկ հայելու մէջ տեսնում էի սաստիկ նիհար, սաստիկ գունատ, կարծես, ծերացած մի աղջիկ, որի անկեղծան, մեքենայական հայեացքը, կարծես, ասում է... ի՞նչ է ասում, — որոշ ոչինչ, բայց մի բան ասում է, որ ոչ ինքն է հասկանում և ոչ ուրիշը կարող է հասկանալ... Սաստիկ դառնութեամբ ես դէն շարտեցի լուսանկարս և հեռացայ հայելուց...

Այստեղ սաստիկ շոգեք են: Ամարանդի սովոր լինելով, ես առանց այն էլ շատ դժուարութեամբ եմ կարողանում դեմանալ. Համարեալ ողջ օրը սենեակիցս դուրս չեմ գալիս: Միայն գիշերներն և առաւօտեան կարողանում եմ ազատ օդ շնչել: Ներքը, սիրելիս, սաստիկ յոգնեցայ. էլ ոչինչ չեմ կարող գրել:

Ընդունիլ կարօտալիւ համբոյրներս:

Քո Աննա Սարգիսեան:

ՆԱՄԱԿ ԺԵ.

Պիֆլիս, յուլիսի 27-ին 1881.

Սիրելի Հովհաննիս,

Այժմ, փառք Աստուծոյ, բաւական լաւ եմ գգում ինձի միայն շոգերն են սաստիկ նեղացնում: Երբեմն երեկոները, լա եղանակներին, դուրս եմ գնում փոքր ինչ գրօններու և շուտով էլ վերադառնում եմ: Հարցնում ես՝ մի՞թէ եղբայրներս դարձեւ պարապ են: Այ. մեր նախկին հարուստ «բարեկամներեց» մ. վերջապէս «խղճաց» մեզ և երկուսին էլ ընդունեց իւր մագազինը, բայց այն պայմանով, որ նրանք իրենց լաւ պահեն: Սայժմ, փառք Աստուծոյ, նրանք տակաւին իրենց լաւ են պահու և, եթէ բանը միշտ այսպէս գնայ, մենք գոհ կը լինինք: Այդ շատ լաւ եղաւ. եթէ եղբայրներս դարձեալ պարապ մնային հաւատացիր, որ քաղցած կը մեռնէինք: Իմ և մօրս հիւանդութեան միջոցին մեր վերջին կողմերը ձեռքներեցս գնացին և մենք մնացել էինք սաստիկ տարակուսած՝ թէ ինչ պիտի անէինք: Այժմ, եղբայրներս գործի կանգնելովը, կարող ենք հաւ ի ջուր ունենալ:

Ես արդէն վերջնականապէս հարտուել եմ գնում ես, հետ. ներկան ինձ այնպէս սարսափելի չէ թուում, ինչպէս է այդ երեւակայում էի առաջ: Միայն եղբորս վաղահաս մահը սըլ տիս մէջ թողել է մի այնպիսի վիշտ, որ երբէք և ո՛չ մի բանով կարող չէ բուժուել: Ամեն օր, ամեն ժամ նա, կարծես, կենդանի կանգնած է աչքիս առաջ, իսկ երազումս համարեա ամեն գիշեր տեսնում եմ նրան: Նրա մեռնելուց յետոյ առանց տանջուելու չէի կարողանում մօտենալ նրա գրքերին ու տետրակներին: Ամեն անգամ, քանի տեսնում էի այդ գրքերն ու տետրակները պահարանում դարսած, իսկոյն մի տե-

յոսկ սաստիկ-սաստիկ ճմլում էր սիրտս և անցեալի յիշողութիւն-կերբը մէկը միւսի ետեւից ախմայ գարթնում էին իմ մէջը: Բայց երբէկ—չգիտեմ ինչո՞ւ—սիրտս սաստիկ ձգտում էր դէպի այդ գրքերն ու տետրակները. ուզում էի քրքրել նրանց, ուզում էի եթերթել, ուզում էի ծայրէ ի ծայր կարդալ բոլորը, և ինձ թըրոնում էր, թէ այդպիսով նա ինքը կենդանի կանգնած իմ առջև՝ խօսելիս կըլինի ինձ հետ: Այդ պատճառով մօտեցայ նրա պահարանին և բաց արի դուռը: Նրա գրքերն ու տետրակները դարսուած էին իրենց կարգով, այնպէս, ինչպէս նա վերջին փոփոխում ինքն իւր ձեռքով դարսել էր: Կարգապահութիւնն ու վիճակը սքրութիւնն առհասարակ նա սաստիկ սիրում էր և ես երկուսը սքրութիւնն առհասարակ կամ տետրակները խառն ի բէք չէի տեսել, որ նրա գրքերը կամ տետրակները խառն ի խառն թափուած լինէին. ամեն ինչ իւր տեղը, ամեն ինչ մաքուր: Բայց այս անգամ գրքերի և տետրակների և տետրակների թող էր նստել. «Իսկ նրա վրայ անգին շերտ հող կայ նստած», մտածեցի ես, դողդոջիւն ձեռքով մի առ մի վերցրի գրքերն և սկսեցի թողը սքրել: Այդ վերջնապէս յետոյ, վերցրի բոլոր տետրակները, ցած բերի և, նախապէս նրանց վրայից էլ թողը սքրելով, սկսեցի մի առ մի թերթել: Այն բոլորն ուսանողական տետրակներ էին, որոնց մէջ իրեն յատուկ մաքրութեամբ և գեղեցիկ ձեռքով գրել էր իւր դասերը: Այդ տետրակների մէջ գտայ և նրա յիշատակարանը: Ինչպէս մի անգին գրեալ էր այս, ես վրայ ընկայ այդ տետրակին և սաստիկ ագա-հու թեամբ սկսեցի թերթել: Ա՛խ, ինչպէս տրոփում էր սիրտս, հուժեղութեամբ սկսեցի թերթել: Ա՛խ, ինչպէս տեսնում էի այդ տետրակը ինչպիսի տանջանքով և սիրով ես սեղմում էի այդ տետրակը կրծքիս, ինչպէս ջերմազին ես համբուրում էի դրան և թըր-ջում արտասուքովս... Մի անգամ, երբ դու կը գաս այստեղ, սիրելի Հովհաննիս, ես այդ տետրակը կը կարդամ քեզ մօտ և դու կը տեսնես, թէ ինչպիսի տղայ էր նա. այդ տետրակի մէջ նա թափել է իւր բոլոր միտքն ու հոգին: Բայց այժմ ես այն-տեղից կ'արտագրեմ նրա բանաստեղծութիւններեց մէկը (յիշա-

տակարանի մէջ բաւական թուով բանաստեղծութիւններ էլ ունի գրած), որ, ինչպէս ամսաթիւեր ցոյց է տալիս, նրա վերջին գրածն է և գրել է մահից մի շաբաթ առաջ: Այդ բանաստեղծութիւնը մի ամբողջ գաղափար կրտայ քեզ նրա հոգեկան աշխարհից:

Հասել է ծանր: Ղուտով դեռահաս,

Մանուկ արեւս պիտի խաւարի:

Դեռ կեանք չտեսած, դեռ չզմայտակած

Մարմինս հողը պիտի առերի:

Ա՛խ, ինչպէս, ինչպէս ուզում եմ սպրել,

Ատրել եւ գործել, գործել եւ ափալ,

Ինչպէս ջերմագին ուզում եմ սիրել,

Ամենքի համար աղոթել եւ լալ...

Ի՛նչդ, անբանը եղբայր... Ինչպիսի կեանքի ծարաւ, ինչքան անկեղծ, խոր զգացմունք, ինչքան տանջանք... Մի՞թէ այդպիսի եղբորն երբ և իցէ կարելի է մոռանալ, իմ անգին քոյրիկ: Երէկուանից դէս ես անընդհատ մտածում եմ նրա մասին և որքան շատ եմ մտածում, այնքան աւելի եմ զգում, թէ որքան մեծ և անփոխարինելի է իմ այդ կորուստը: Գիշերս բոլորովին վարողացայ քնել. ախամայ արտասուքը հանդարտ հոսում էր աչքերիցս և թրջում էր դէմքս, անկողինս և ես դողդոջուն ձեռքերս սաստիկ սիրով, սաստիկ յուսահատութեամբ ու տանջանքով տարածում էի դատարկ օդի մէջ՝ գոնէ նրա ուրուականը գրկելու համար... Ա՛խ, նրա չեղատակարանն ամեն ինչ դարձեալ տալին ու վրայ արեց իմ մէջ: Դարձեալ միտում եմ առաջուայ նման... Ո՛չ, այլ ևս ոչինչ չեմ գրել այդ մասին. միշտ միւլենոյն երգը... Դուցէ արդէն ձանձրացրել եմ քեզ:

Մնացնր բարեւ, իմ սիրելի քոյրիկ. ցնոր գրութիւն:

Բո Աննա Սարգիսան:

ՆԱՄԱԿ ԺԶ.

Թիֆլիս, օգոստոսի 16-ին 1881.

Սիրելի Հախիսիկ,

Դու ինձ խորհուրդ ես տալիս, որ շատ չլուզուեմ և խնդրում ես, որ եղբորս չեղատակարանն ուզարկեմ քեզ, որպէս զի այլ ևս ոչինչ տեղիք չունենամ յուզուելու: Ես էլ եմ հասկանում, որ շատ յուզուելը ներկայ դուրսութեան մէջ ինձ շատ վնասակար է, բայց մի վախել. չեղատակարանը գտնելուս առաջին օրերն էր, որ այնպէս խիստ յուզում էի, այժմ ինձ զսպում եմ: Ուրեմն, սիրելիս, չեղատակարանը կը մնայ ինձ մօտ. ես որչ կեանքումս երբէք չեմ բաժանուիլ նրանից այն սրտաձառով միայն, որ ես ինձ համար անգին է և միշտ անգին կը մնայ:

Դարձեալ բանը թարսուեց. մեծ եղբայրս իւր հին աստուածը միտը բերեց: Մեր «բարեկամն» էլ վաւերեց նրան, և խրատուք ունէր, որովհետև եղբայրս դարձեալ սկսել էր խմել. իւր ստացած ոռձիկից էլ ոչ մի կուպիկ տուն չէր բերում: Է՛հ, ես այդպէս էլ կարծում էի. արեքոցութիւնն այնպէս չէ բոյն դըրել նրա մէջ, որ նա երբ և իցէ կարողանայ դրանից ձեռք վերցնել: Իրա համար կամք է հարկաւոր և փոքր ինչ ժուժկալութիւն, իսկ եղբայրս թէ՛ գործի է դրանցից և թէ՛ ինքը մեծ նշաւակութիւն չէ ստալիս դրանց. անգործ մնալն ու խմելու նրա համար ամեն բանից բարցը է: Իսկ փոքր եղբայրս դարձեալ այնտեղ է, և պետի ասած, որ կարողացել է ծուլութեանը յաղթել և աշխատում է: Բայց նրա ստացած ոռձիկն ինչ պիտի անէ մեր այնքան, թէ՛կուզ սաստիկ չտիաւորած կարիքներն: Մայրախեղ ազբարտութիւնն սարսուում է թափելու մեր դուռը... Մայրս ուզում է սուրբ ծախել, բայց ես չեմ թողնում, դրանից ստացած փողն էլ շուտով կը հասնի (մանուսանդ, որ

տուճն անհամեմատ պակաս են զնահատում), այնուհետև ի՞նչ պիտի անենք, ի՞նչով պիտի վճարենք բնակարանի վարձը... Ո՛չ, անմտութիւն կը լինէր հոգսերի վրայ նոր հոգսեր էլ աւելացնել: Երևակայում եմ, թէ՛ որքան դժուար է մի տնից միւսը տեղափոխուել, թէ՛ որքան անտանելի է տանտիրոջից միշտ անարգուած լինել տան վարձն իւր ժամանակին չվճարելու համար... Ո՛չ, հարգարարատիկ աւելի լաւ է մեռնել, թէ՛ կրուք քաղցած, բայց ակամօք հանգիստ՝ իւր սեպհական տան յարկի տակ: Սեպհական տանը, սեպհական տանը... ուրիշ տեղ կեանքը կրկնապատիկ, քառապատիկ դառը կը լինի—նս այդ զգում եմ: Մայրս ուզում է մի որ և իցէ գործ վերցնել, Տեսնենք ի՞նչ կը լինի,

Քո Աննա Սարոյեան:

ՆԱՄԱԿ ԺԷ.

Թիֆլիս, օգոստոսի 24-ին 1881.

Սաստիկ յուզուած գրում եմ քեզ այս առղերը, սիրելի Հովիտիմէ: Նս այժմ կատարելապէս ոչնչացած եմ:—Մայրս կար էր վերցրել կարելու, ես էլ օգնում էի նրան, բայց... ոչինչ չկարողացայ կարել, սակայն, ո՛չ թէ ոչինչ չկարողացայ կարել, այլ—կարել չգիտէի, կարը փչացրի: Կար բաժանող կինը տեսաւ կարածս և սաստիկ յանդիմանեց նախ մօրս, որ ինձ թողել էր կարելու, յետոյ—ինձ, որ կարը փչացրել էի: «Ահագին աղջիկ ես և ամենահասարակ կար անգամ չգիտես, ամօթ չէ», ասաց նա: Ամօթ չէ:—Այնքան ամօթ էր, որ հագար երանի կը լինէր, եթէ՛ նոյն րոպէին գետինը պատուէր և կլանէր ինձ յաւիտեան... Մինչև անգամ ես մտադրեցի ինքնասպանութիւն գործել և կը գործէի, Աստուած է վկայ,

կը գործէի, եթէ... Ամեն տեսակ դժբաղդութիւն, ամեն տեսակ բաղդի հալածանք ես կը տանէի—և տանում եմ—, բայց հասարակ կինոյ այդ հասարակ բանի համար տուած յանդիմանութիւնն ես ո՛չ մի կերպ չէի տանել և չեմ էլ կարող տանել: Այդ յանդիմանութիւնն իմ մտքից մի վայրկեան անգամ չէ հեռանում, և որքան շատ եմ մտածում այդ մասին, այնքան... սիրտս անտանելի ծանրանում է... Կարծում եմ, թէ ամբողջ մարդկութիւնն աշխարհիս ամեն ծայրերից, մինչև անգամ տան չորս պատերը, որոնցից ես այլ ևս դուրս չեմ գալիս, ծաղրելով մատնացոյց են անում ինձ և ասում— տեսէք, այս ահագին աղջիկը հասարակ կար անել անգամ չգիտէ... Ի՞նչ մեծ համարում ունէի ինձ վրայ. կարծում էի թէ՛ բաւական է, որ մի բան անել կամենամ և—վերջացած է, ամեն բան կանեմ, բայց իրողութիւնը, փորձը ցոյց տուեց, որ ո՛չ թէ ոչինչ չեմ կարող անել, այլև... որ ես ինքս ոչ ի ն չ եմ, ոչ ի ն չ, ոչ ի ն չ... Նս դեռ մի անգամ մեռած եղբորս հպարտութեամբ պատասխանեցի. «Ի՞նչ, ես կաշխատեմ»... Խեղճ, խեղճ Աննա... Նս նա էլ յոյս ունէր ինձնից, որ ես կարող եմ աշխատել... Ո՛հ, որքան անտանելի դրութիւնս... Նս ինքս ինձնից սարսափում եմ: Գոնէ չունենայի սրտիս մէջ՝ դեռ մանկութեանս հասակից սերմանուած՝ հպարտութիւն, գոռոզութիւն, գոնէ կարողանայի տանել ինձ տուած արդարացի յանդիմանութիւնները, գոնէ սիրտս կարողանար հաշտուել ուղեղիս հետ,—այն ժամանակ... իսկ այժմ... կատարելապէս իրաւունք ունիմ ասելու, որ ես իսկապէս թըշուառ եմ... Ա՛խ, ա՛խ, անգին քոյրիկ... սրտիս և ուղեղիս մէջ դժոխք կայ...

Քո Ա. Ս.

ՆԱՄԱԿ ԺԲ.

Թիֆլիս, սեպտեմբերի 9-ին 1881.

Սիրելի Հռիփսիմէ,

Աղքատ տեղովդ ինձ քսան ըուբլի ես ուղարկելը ինչու...
 ինչու ես ուղարկել... Եւ դեռ ներողութիւն էլ ես խնդրում, որ
 ուշ ես ուղարկում, որովհետեւ ուժիկդ նոր ես ստացել... Բայց
 քեզ ո՞վ ասաց, որ ուղարկես... Նպատակդ ի՞նչ էր, որ ուղար-
 կել ես... ինձ ծաղրել, ինձ յանդիմանել... այո... կարծես
 թէ ես ինքս ինձ քեզ եմ ծաղրում, կարծես թէ ես ինքս
 ինձ քեզ եմ յանդիմանում... Եւ գրում ես, որ ես ոչինչ շնոր-
 հակալութիւն չգրեմ քեզ: Մի՞թէ կարծում էիր, որ շնորհակա-
 րութիւն կը գրեմ քեզ. ի՞նչ բանի համար.— Երան համար, որ
 տանջանք կրկնապատկեցիր... Երան համար, որ ինքս ինձ
 աւելի ատել տուեցիր... Երան համար, որ մի անգամից ցոյց
 տուիր, թէ որքան չնչին և անպէտք եմ ես՝ քեզ հետ համե-
 մատած... Երբ բաց արի ծրարը, հանեցի միջից ուղարկածդ
 թղթադրամներն և կարդացի նամակդ,— արիւնս գլխիս խփեց:
 Կատարութիւնից, հպարտութիւնից, ամօթից և անգորութիւ-
 ճից ես լաց եղայ... Աստուած իմ, այն ի՞նչ արտասուք է...
 Կեանքիս մէջ դեռ այնպէս լաց չէի եղել. արտասուքիս իւրա-
 քանչիւր կաթիլը, կարծես, թոյն էր, որ քաղում էր ուղղակի
 սրտիցս... Անգլին քոյրիկ, այս ի՞նչ է արտահոսում ինձ...

Քո Աննա Սարգեան:

Յ. Գ. Նամակիս հետ ես եմ ուղարկում քեզ ուղարկածդ
 քսան ըուբլին: Անշուշտ դու հասկանում ես ինձ և ինձնից
 չես նեղանալ, որ այդ փողերդ չեմ ընդունում:

Ա. Ս.

ՆԱՄԱԿ ԺԹ.

Թիֆլիս, սեպտեմբերի 15-ին 1881.

Կարձեալ, դարձեալ ուղարկել ես և հետն էլ մի երկար
 ու խիստ լանդիմանութիւն: Այո, այո, սիրելի Հռիփսիմէ, հա-
 մաճայն եմ. քեզ հետ, որ ես շատ հպարտ եմ, շատ փոքրոգի
 և շատ յիմար, բայց . . . հաւատացիր, որ դու աւելի մեծ բա-
 րեւարութիւն արած կը լինէիր ինձ, եթէ այդ փողերը հենց
 սկզբից չուղարկէիր: Ի՞նչ չես կարող երեւակայել, թէ ինչպէս
 տանջում եմ ես, երբ նայում եմ այդ փողերին... Այնու ամե-
 նայնիւ, ընդունում եմ, բայց այն պայմանով,— ուշադրութիւն
 դարձրու,— այն պայմանով, որ այդ իմ պարտքս լինի և ես
 այսօր թէ հգուց, բայց մի ժամանակ՝ անպատճառ վե-
 րադարձնեմ քեզ: Գրիր, որ այդ պայմանին համաձայն ես,
 ապա թէ ոչ դարձեալ ետ կ'ուղարկեմ: Մինչև գրելը ես այդ
 փողերից մի կոպէկ անգամ չեմ ծախսել:

Քո Աննա Սարգեան:

ՆԱՄԱԿ Ի.

Թիֆլիս, սեպտեմբերի 19-ին 1880.

Իմ սիրելի Հռիփսիմէ,

Շնորհակալ եմ:

Քո Աննա Սարգեան:

ՆԱՄԱԿ ԻԱ.

Թիֆլիս, հոկտեմբերի 4-ին 1881.

Սիրելի Հռիփսիմէ,

Ի՞նչ ես ուզում, որ գրեմ: Թէ ինչպէս ես անցկացնում
օրս: Կզակս ավիս յենած՝ առաւօտից մինչև երեկոյ նըս-
տած եմ լուսամտի առաջ և եթէ երբեմն պատահում է, որ
մի որ և իցէ ճանճ՝ ցրտից անզորացած՝ մասն է գալիս ապա-
կենքերի վրայ, բռնում եմ և, կամ գլուխն եմ կտրում, դէն գցում,
կամ թևերն և ոտները կտրատում: Սրանից էլ լաւ գրադմունք կ'ու-
զես: Ժամանակ չէ, թող անցնի, էլն. ուրիշ կերպ չանցնի, թող
այսպէս անցնի, ի՞նչ վնաս: Վերջը խօ մահ է...

Քո Ա. Ս.

ՆԱՄԱԿ ԻԲ.

Թիֆլիս, հոկտեմբերի 18-ին 1881.

Սիրելիս,

Ի զուր ես դու ինձ երկար ու բարակ խրատներ կարդում.
Ի զուր ես աշխատում ապացուցանել ինձ, որ իմ այս խելքո-
վըս, հասկացողութեամբս ես չեմ կարող և չպէտք է այսպէս
լինիմ և որ ես զօրով եմ այսպէս անում և անարդարացի կեր-
պով չարախօսում եմ ինքս ինձ վրայ: Նս ինքս էլ այդպէս եմ
կարծում, բայց արև տես, որ անիծեալ իրականութիւնը խելք
և հասկացողութիւն չէ պահանջում, այլ—կեսանքի համար
պատրաստութիւն. իսկ հենց այդ քանն է, որ ես չունիմ,

բայց թէ ինչու չունիմ,—այդ դու ինքդ էլ շատ լաւ կարող ես
հասկանալ, եթէ քրքրես անցեալս և դաստիարակութիւնս...
Ի՞նչ միանգամից համոզուիր, որ ես կեանքի համար մի կոպէկ,
մի գրոջ չարժեմ: Կրթում եմ՝ ես անպատրաստ եմ, անպատ-
րաստ,—դու այս երբէք մի մոռանար: Իսկ նոր պատրաստուելու
սկսել այժմ—անհնարին է: Ինչպէս սկզբից հիմքը գցուել է, այն-
պէս էլ պէտք է գնայ մինչև վերջը: Նւ թող գնայ: Նս հրաշք-
ներ չեմ սպասում և ոչ ինքս կարող եմ հրաշքներ գործել:
Նս մի այլանդակ արարած եմ, որի բերանը հացը ծամած պի-
տի դնել... Ո՛րքան ատում եմ ինքս ինձ, որքան զգում եմ
ինքս ինձնից... Եթէ հնար լինէր սոսկալի մեղապարտութիւ-
նից խուսափելու...

Քո Աննա Սարոյեան:

ՆԱՄԱԿ ԻԳ.


Թիֆլիս, հոկտեմբերի 31-ին 1881.

Իմ անգլին Հռիփսիմէ,

Այս տողերը գրելիս ես արդէն թոյն եմ խմել, իսկ երբ
կարդալիս կը լինես, ես այլ ևս կենդանի չեմ լինել: Մնաս
բարև... յաւիտեան... էլ ինձ չես տեսնիլ: Անիծիք ինձ, բայց
լաց եղիք. արտասուք գուցէ թեթևացնէ մեղապարտ հոգիս...
Ի՞նչ սոսկալի է թոյնը... բայց կեանքն աւելի սոսկալի է, և
հարկէ, ինձ համար, իսկ քեզ և ուրիշներին համար—ոչ: Հն,
կարծեմ արդէն ստացած պէտք է լինիս մի քանի օր առաջ
իմ քեզ ուղարկած քանն ըուբլին, որ պարտ էի քեզ: Նե-
րկը, հպարտութիւնս յաղթեց: Այս նոյն հպարտութիւնն է, որ

ինձ գերեզման է տանում: Արդեօք կը ներէ՞ ինձ Աստուած,
կը ներէ՞ Գրեգորե հոգին... բայց սպրեկն ինձ համար անհնա-
րին էր: Դարձեալ մնաս բարև, իմ աննման քոյրիկ. աղօթք
արա մեղապարտ հոգուս համար:

Քո Թշուառ Աննա:



[Faint, mostly illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]



46159